



**«ՏԵ-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն**

**Ֆինանսական հաշվետվություններ**  
2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

<b>ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ.....</b>	<b>3</b>
<b>ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>4</b>
<b>ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ .....</b>	<b>6</b>
<b>ՇԱՅՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐԹԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ .....</b>	<b>7</b>
<b>ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ .....</b>	<b>8</b>
<b>ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ .....</b>	<b>9</b>
<b>2015Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....</b>	<b>10</b>
1. Հաշվետու ընկերությունը.....	10
2. Համապատասխանության մասին հայտարարություն.....	12
3. Նոր և վերանայված ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (\$ՀՄՍ-ների) կիրառումը.....	12
4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն.....	19
5. Գնահատումների և դատողությունների օգտագործում.....	29
6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ.....	30
7. Պահանջներ բանկերի նկատմամբ.....	30
8. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ.....	30
9. Հիմնական միջոցներ.....	30
10. Շահութահարկ.....	31
11. Այլ ակտիվներ.....	32
12. Կանոնադրական կապիտալ.....	32
13. Կրեդիտորական պարտք և հաշվեգրված ծախսեր.....	33
14. Կառավարման պարզապահարկերից եկամուտ.....	33
15. Տոկոսային եկամուտ.....	33
16. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից գուտ օգուտ.....	33
17. Կոմիսիոն ծախսեր.....	33
18. Վարչական և այլ ծախսեր.....	34
19. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ.....	34
20. Ֆինանսական գործիքների իրական արժեքը.....	35
21. Կապիտալի ռիսկի կառավարում.....	36
22. Ֆինանսական ռիսկերի կառավարում.....	36
23. Կապակցված կողմերի բացահայտումներ.....	42

## **Ղեկավարության հայտարարությունը 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և հաստատման պատասխանատվության վերաբերյալ**

Ղեկավարությունը պատասխանատու է «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն կամ Ցե-Կվադրատ) 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա գործունեության արդյունքները, դրամական միջոցների հոսքերը և սեփական կապիտալում փոփոխությունները ճշմարիտ ներկայացնող, ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է՝


- Հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճ ընտրության և կիրառման համար,
- Հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ ներկայացվող տեղեկատվության համապատասխանության, վստահելիության, համեմատականության և հասկանալիության համար,
- Լրացուցիչ բացահայտումների տրամադրման համար, երբ ՖՀՄՍ-ի հատուկ պահանջների համապատասխանությունը բավարար չէ, որպեսզի օգտագործողները պատկերացում կազմեն որոշակի գործարքների Էության, Ընկերության ֆինանսական վիճակի և ֆինանսական գործունեության այլ միջոցառումների և դրույթների վերաբերյալ, և
- Ընկերության գործունեության անընդհատությունն ապահովելու կարողության գնահատման համար:

Ղեկավարությունը նաև պատասխանատու է՝


- Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության և ապահովության մշակման, ներդրման և պահպանման համար,
- Համապատասխան հաշվապահական գրանցումներ վարելու համար, որոնք բավարար կլինեն Ընկերության գործառնությունները արտացոլելու և ներկայացնելու և ցանկացած ժամանակ Ընկերության ֆինանսական վիճակը ողջամիտ ճշգրտությամբ բացահայտելու համար, ինչպես նաև հնարավորություն կընձեռեն Ղեկավարությանը հավաստիանալու, որ Ընկերության ֆինանսական հաշվետվությունները համապատասխանում են ՖՀՄՍ-ներին,
- ՀՀ օրենսդրության և հաշվապահական ստանդարտների պահանջներին համապատասխան հաշվապահական հաշվառում վարելու համար,
- Ընկերության ակտիվների անվտանգության ապահովման ուղղությամբ խելամիտ քայլերի իրականացման համար, և
- Խարդախությունների և նմանատիպ այլ երևույթների բացահայտման և կանխարգելման համար:

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները ղեկավարության կողմից հաստատված են հրապարակման համար 2016թ. ապրիլի 27-ին:

Ստորագրված է Ընկերության ղեկավարության անունից՝

  
Արման Կարոնյան  
Գլխավոր գործադիր տնօրեն



  
Իզաբելա Աղիլխանյան  
Գլխավոր ֆինանսական և  
գործառնական տնօրեն

## ԱՆԿԱՆ ԱՌԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Տե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության Տնօրենների հոդված

Մեր կողմից իրականացվել է «Տե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

### *Դեկլարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար*

Դեկլարությունը պատասխանատու է ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը դեկլարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

### *Աուդիտորի պատասխանատվությունը*

Մեր պատասխանատվությունն է՝ մեր կողմից իրականացված աուդիտի արդյունքում կարծիք արտահայտել ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտը իրականացրեցինք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք և իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին որոշամիտ հավաստիացում ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողություններից, ներառյալ՝ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված՝ ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները նաև ներառում են ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման կանոնների և մեթոդների համապատասխանության, դեկլարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների հիմնավորվածության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

«Դելոյթ» անվանումը վերաբերում է երաշխիքով սահմանափակված «Դելոյթ Թուշ Թումացու Լիմիթեդ» բրիտանական մասնավոր ընկերությանը, ինչպես նաև դրա անդամ ընկերությունների գանձը ներկայացնող ցանկացած մեկ կամ մի քանի կազմակերպության, որոնցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է առանձին և անկախ իրավաբանական անձ: «Դելոյթ Թուշ Թումացու Լիմիթեդ»-ի, նրա անդամ ընկերությունների և իրավական կառուցվածքի մասին տեղեկատվություն ստանալու համար այցելեք [www.deloitte.com/about](http://www.deloitte.com/about): ԱՊԳ-ում «Դելոյթ»-ի իրավական կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար այցելեք [www.deloitte.am/about](http://www.deloitte.am/about):  
© 2016 «Դելոյթ Արմենիա» ՓԲԸ: Բոլոր իրավունքները պաշտպանված են:

## Կարծիք

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ «Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ֆինանսական վիճակը, և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների:



Սրբուհի Հակոբյան  
Գործադիր տնօրեն



Արփինե Ղևոնդյան  
Աուդիտի ղեկավար

Դելոյթ Արմենիա ՓԲԸ  
Երևան, Հայաստանի Հանրապետություն  
27 ապրիլի, 2016թ.

**Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	ճան.	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	6	101,858	386,978
Պահանջներ բանկերի նկատմամբ	7	140,423	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	8	202,200	106,809
Հիմնական միջոցներ	9	9,533	6,570
Ոչ նյութական ակտիվներ		940	1,249
Հետաձգված հարկային ակտիվներ	10	2,194	2,003
Այլ ակտիվներ	11	17,743	6,049
<b>Ընդամենը ակտիվներ</b>		<b>474,891</b>	<b>509,658</b>
<b>Սեփական կապիտալ և պարտավորություններ</b>			
<b>Կապիտալ և պահուստներ</b>			
Կանոնադրական կապիտալ	12	650,000	650,000
Կուտակված վնաս		(197,035)	(155,792)
<b>Ընդամենը սեփական կապիտալ</b>		<b>452,965</b>	<b>494,208</b>
<b>Պարտավորություններ</b>			
Կրեդիտորական պարտք և հաշվեգրված ծախսեր	13	21,926	15,450
<b>Ընդամենը պարտավորություններ</b>		<b>21,926</b>	<b>15,450</b>
<b>Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ</b>		<b>474,891</b>	<b>509,658</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության անուկից 2016թ. ապրիլի 27-ին:



**Արման Վարդանյան**  
Գլխավոր գործադիր տնօրեն




**Իգարբեյա Ադիլխանյան**  
Գլխավոր ֆինանսական և  
գործառնական տնօրեն

**Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 2015թի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	<b>Պան.</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Կառավարման պարգևավճարներից եկամուտ	14	109,809	20,692
Տոկոսային եկամուտ	15	25,318	22,730
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտ	16	11,181	1,359
Կոմիսիոն եկամուտներ		4,200	-
Կոմիսիոն ծախսեր	17	(34,567)	(6,851)
Արտարժույթային գործառնություններից զուտ վնաս		(387)	(145)
Արտարժույթի փոխարժեքի տատանումներից օգուտ/(վնաս)		2,392	(99)
Վարչական և այլ ծախսեր	18	(159,380)	(166,170)
<b>Վնաս նախքան շահութահարկով հարկումը</b>		<b>(41,434)</b>	<b>(128,484)</b>
Շահութահարկի գծով օգուտ	10	191	1,443
<b>Տարվա վնաս</b>		<b>(41,243)</b>	<b>(127,041)</b>
<b>Ընդամենը վնաս և այլ համապարփակ վնաս ժամանակաշրջանի համար</b>		<b>(41,243)</b>	<b>(127,041)</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության անունից 2016թ. ապրիլի 27-ին:



**Արման Վարդանյան**  
Գլխավոր գործադիր տնօրեն




**Իգարելա Ադիլխանյան**  
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	Նախ. Ծան.	Կանոնադրական կապիտալ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը 2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		650,000	(28,751)	<b>621,249</b>
Ընդամենը տարվա վնաս և այլ համապարփակ վնաս		-	(127,041)	<b>(127,041)</b>
<b>Մնացորդը 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>12</b>	<b>650,000</b>	<b>(155,792)</b>	<b>494,208</b>
Ընդամենը տարվա վնաս և այլ համապարփակ վնաս		-	(41,243)	<b>(41,243)</b>
<b>Մնացորդը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>12</b>	<b>650,000</b>	<b>(197,035)</b>	<b>452,965</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության անունից 2016թ. ապրիլի 27-ին:



**Արման Վարդանյան**  
Գլխավոր գործադիր տնօրեն




**Իգաբեյա Ադիլխանյան**  
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն



**Դրամական միջոցների հոսքի մասին հաշվետվություն 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

	<b>Ճան.</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Ստացված կառավարման պարգևավճարներ		100,422	16,754
Ստացված տոկոսներ		19,895	22,730
Աշխատավարձի և նմանատիպ ծախսերի վճարում		(80,410)	(82,485)
Ստացված կոմիսիոն եկամուտներ		4,200	-
Վճարված կոմիսիոն ծախսեր		(31,612)	(4,790)
Արտարժույթային գործառնություններ		(387)	(145)
Վճարված կանխավճարներ, գործառնական և վարչական ծախսեր		(75,889)	(86,587)
<b>Գործառնական գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(63,781)</b>	<b>(134,523)</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Ներդրումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներում		(214,763)	(105,450)
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրացումից ստացված միջոցներ		130,553	-
Բանկերում տեղաբաշխված ավանդներ		(135,000)	-
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(4,670)	(9,417)
<b>Ներդրումային գործունեությունում օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(223,880)</b>	<b>(114,867)</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում</b>		<b>(287,661)</b>	<b>(249,390)</b>
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեսկզբի դրությամբ		386,978	636,495
Արտարժույթի փոխարժեքների տատանման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		2,541	(127)
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ տարեվերջի դրությամբ</b>	<b>6</b>	<b>101,858</b>	<b>386,978</b>

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են հրապարակման համար ղեկավարության անունից 2016թ. ապրիլի 27-ին:



**Արման Վարդանյան**  
Գլխավոր գործադիր տնօրեն





**Իգարբելա Ադիլխանյան**  
Գլխավոր ֆինանսական և գործառնական տնօրեն

## 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

### 1. Հաշվետու ընկերությունը

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է 2013թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Ընկերությունը գրանցվել է ՀՀ Կենտրոնական Բանկում («ՀՀ ԿԲ») որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ և ստացել թիվ 3 լիցենզիան: Ընկերության գրանցման հասցեն է Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Հանրապետության 37:

«Ցե-Կվադրատ Ամպեգա Ասեթ Մենեջմենթ Արմենիա» ՍՊԸ-ի կանոնակարգող մարմիններն են՝ մասնակիցների ընդհանուր ժողովը, դիտորդ խորհուրդը և գլխավոր գործադիր տնօրենը, որի պաշտոնը զբաղեցնում է Արման Վարդանյանը: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 5 աշխատակից (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 4 աշխատակից):

Ընկերության վերջնական վերահսկող կազմակերպությունն է «Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ ԱԳ» ընկերությունը, որը գրանցված է Շոտենֆելդգասսե 20, 1070 Վիեննա, Ավստրիա հասցեով և որը հանդիսանում է «Ցե-Կվադրատ Գրուպ» ընկերության մայր ընկերությունը: Ընկերության այլ մասնակիցների մասին տեղեկատվությունը բացահայտված է Ծան.12-ում:

Ընկերությունը ֆոնդերի կառավարիչ է և իրականացնում է հետևյալ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարումը՝

- Ցե-Կվադրատ Ամպեգա կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ
- Ցե-Կվադրատ Ամպեգա պահպանողական կենսաթոշակային ֆոնդ
- Ցե-Կվադրատ Ամպեգա հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ

### Կարգավորող միջավայրը

ՀՀ Կենտրոնական բանկը վերահսկում է Ընկերության գործունեության տարաբնույթ ոլորտները, և կարող է իրականացնել ստուգումներ՝ կիրառելի օրենսդրության, կանոնակարգերի և կանոնների հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով: Այս օրենսդրությունը, կանոնակարգերը և կանոնները կարգավորում են գործունեության տարբեր ասպարեզները, ներառյալ՝ վաճառքի և մարքեթինգային գործունեությունը, թրեյդինգային գործառնությունները, հաճախորդների ակտիվների գծով կիրառվող մոտեցումը, շարունակական մասնագիտական վերապատրաստումը, փողերի լվացման կանխարգելման գործունեությունը, հաճախորդի ճանաչման քաղաքականությունը, հաշվետվությունների և հաշվառման վարումը, ինչպես նաև տնօրենների, ղեկավար և շարքային աշխատակիցների վարվելակարգի կանոնները:

### Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ), հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, կարող է լրացուցիչ բարդություններ ստեղծել Հայաստանում գործող ընկերությունների համար:

Ինչպես դիտվել է նախկինում, փաստացի կամ թվացյալ ֆինանսական խնդիրները կամ զարգացող տնտեսությամբ երկրներում ներդրումների հետ կապված հնարավոր ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի ներդրումային միջավայրի, և նրա տնտեսության ընդհանուր վիճակի վրա: Ընկերության ակտիվների վրա բացասական ազդեցություն կարող են ունենալ ընդհանուր տնտեսական վիճակը, արժեթղթերի շուկայում, կանոնակարգային դաշտում և աշխարհաքաղաքական այլ փոփոխությունները, որոնք բոլորն էլ դեր ունեն ակտիվների գնահատման, թրեյդինգային գործունեության, տոկոսադրույթների, ներդրողների ընդհանուր

տրամադրվածության նկատմամբ, և դուրս են ընկերության վերահսկողությունից: Վարկային շուկաների իրադրության վատթարացումը, կարճաժամկետ տոկոսադրույքների և արժեթղթերի գնահատումներում նվազումները բացասական ազդեցություն ունեն ընկերության կապիտալի վրա:

Երկրի ապագա տնտեսական զարգացման հիմնական ուղղության վրա իրավական, կանոնակարգման և քաղաքական զարգացման հետ միասին զգալիորեն ազդում են կառավարության կողմից ընդունված հարկաբյուջետային և դրամավարկային քաղաքականությունները: Դեկավարությունը հնարավորություն չունի կանխատեսել բոլոր զարգացումները, որոնք կարող են ազդեցություն ունենալ ֆինանսական ոլորտի, և տնտեսության վրա ընդհանուր առմամբ, և հետևաբար, չի կարող կանխատեսել այն ազդեցությունը որ այդ փոփոխությունները կարող են ունենալ ընկերության զուտ ակտիվների արժեքի վրա: Ներկայացված ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ընթացիկ գործառնական և բիզնես միջավայրի ազդեցությունը ընկերության գործունեության և ֆինանսական արդյունքների վրա: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել դեկավարության գնահատումներից:

Որպես ներդրումների կառավարիչ՝ ընկերությունը նաև ենթակա է կարգավորման պահանջների, որոնք, մասնավորապես, առնչվում են հաճախորդների հանդեպ տարաբնույթ ֆիդուցիար պարտավորություններին, կառավարման պարզապահարկներին, համապատասխանության գործողությունների իրականացմանը, միջնորդային պայմանագրերին, շահերի բախմանը, զովազդային, կառավարչի և հաճախորդների միջև գործակալության խաչաձև և հիմնական գործարքների սահմանափակումներին, գրանցումների վարման և հաշվետվությունների ներկայացման, բացահայտման ինչպես նաև կեղծիքից պաշտպանվածության ընդհանուր դրույթներին:

Ֆինանսական կազմակերպությունները, որպես կանոն, պետք է ներդնեն փողերի լվացման կանխարգելման քաղաքականություններ, իրականացնեն աշխատակիցների հատուկ վերապատրաստման դասընթացներ, նշանակեն փողերի լվացման կանխարգելման համար պատասխանատու աշխատակցի: Ավելին, տվյալների գաղտնիության և պաշտպանության ոլորտում կանոնակարգային գործառնությունները ողջ աշխարհում շարունակաբար զարգանում են, և պայմանավորված են հիմնականում տեխնոլոգիաների զարգացմամբ, և որպես արդյունք՝ տեղեկատվության արագ տարածման հնարավորություններով: Ընկերությունը որքանով որ կարելի է պետք է ապահովի համապատասխանությունը այդ կանոնակարգային պահանջներին: Դեկավարության կողմից սահմանվել են քաղաքականություններ և ընթացակարգեր այդ կանոնակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու նպատակով:

### **Գործունեության անընդհատությունը**

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով գործունեության անընդհատության սկզբունքի վրա, որը ենթադրում է ակտիվների իրացում և պարտավորությունների մարում սովորական գործունեության ընթացքում:

Ընկերությունը հիմնադրվել է 2013թ., Հայաստանի Հանրապետությունում 2014թ. ներդրվող կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում հավաքագրվող միջոցների կառավարման նպատակով: Տվյալ բարեփոխումները ներկայացված են «Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքում (այսուհետև՝ «օրենք»), որը սահմանում է կենսաթոշակային համակարգի պարտադիր և կամավոր բաղադրիչների կառուցվածքը և դրանց կառավարման գործընթացը:

Պարտադիր վճարումների դեմ գործը քննվել է Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանում 2014 թվականին, և համաձայն դատարանի՝ 2014թ. ապրիլի 2-ի որոշման, օրենքի որոշ կետեր որակվել են որպես հակասահմանադրական: 2014թ. հունիսի 21-ին ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է օրենքի փոփոխություն, համաձայն որի կենսաթոշակային համակարգի պարտադիր մասնակցություն է սահմանվել միայն պետական աշխատողների համար, մինչդեռ մասնավոր հատվածի աշխատակիցների համար սահմանվել է կամավոր մասնակցության հնարավորություն մինչև 2017թ. հուլիսի 1-ը, որից հետո համակարգին մասնակցությունը պարտադիր է լինելու թե՛ պետական, և թե՛ մասնավոր հատվածի համար:

Անշուշտ նման զարգացումները բացասաբար են ազդել կենսաթոշակային ֆոնդերի, ինչպես նաև Ընկերության հասույթի վրա: Նման անբարենպաստ զարգացումների և անորոշությունների արդյունքում Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերն ունեցել են շատ անկանոն դրամական ներհոսքեր: Այս անորոշությունները շարունակվել են 2015թ-ին:

Անկախ վերը նշված անորոշություններից, ՅՅ կառավարությունը հաստատակամ մտադրություն ունի գործարկել կենսաթոշակային համակարգի բարեփոխումները, որոնք վերաբերում են կենսաթոշակային համակարգի գործարկմանը՝ նախքան 2017թ. հուլիսի 1-ին համակարգի ուժի մեջ մտնելը: Ընկերության բաժնետերերն իրենց հերթին շարունակում են աջակցություն ցուցաբերել Ընկերությանը և վերջինիս հասույթի ապահովմանը նպաստելու նպատակով դիտարկում են ֆոնդերի կառավարման ասպարեզում լրացուցիչ ծառայություններ և գործիքներ ներդնելու հնարավորությունը: Արդյունքում, ղեկավարությունը հայտատարում է, որ սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառելի է գործունեության անընդհատության սկզբունքը:

## **2. Զամապատասխանության մասին հայտարարություն**

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

## **3. Ֆինանսական հաշվետվությունների նոր և վերանայված միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ների) կիրառումը**

### **Փոփոխություններ ՖՀՄՍ-ներում, որոնք ազդում են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա**

Ընթացիկ տարում ընդունվել/վերանայվել են հետևյալ Ստանդարտները և դրանց մեկնաբանությունները: Այս նոր Ստանդարտները և դրանց մեկնաբանությունները Էական ազդեցություն չեն ունեցել սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների վրա:

- ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ
- ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ

**ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2010-2012 թվականներ.** ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումների 2010-2012թթ. թվականներում է մի շարք ՖՀՄՍ-ների փոփոխություններ, որոնք ներկայացված են ստորև:

ՖՀՄՍ 2-ի փոփոխությամբ տեղի է ունենում փոփոխություն «իրավունքի առաջացման պայմաններ» և «շուկայական պայմաններ» հասկացության սահմանման մեջ, ավելացնելով «կատարողական պայմաններ» և «ծառայության պայմաններ» հասկացությունների սահմանումները, որոնք նախկինում ներառված էին «իրավունքի առաջացման պայմանների» սահմանման մեջ:

ՖՀՄՍ 3-ի փոփոխությունները պարզաբանում են, որ պայմանական վճարումը, որը դասակարգվում է որպես ակտիվ կամ պարտավորություն, պետք է չափվի իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, անկախ նրանից, թե արդյոք պայմանական վճարն իրենից ներկայացնում է ֆինանսական գործիք՝ համաձայն ՖՀՄՍ 39-ի կամ ՖՀՄՍ 9-ի, կամ ոչ ֆինանսական ակտիվ կամ պարտավորություն:

ՖՀՄՍ 8-ում տեղի ունեցած փոփոխություններով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը բացահայտի ղեկավարության դատողությունները՝ կիրառելով ամբողջականացման չափանիշը գործառնական սեզմենտների նկատմամբ և պարզաբանվում է, որ հաշվետու սեզմենտի ընդհանուր ակտիվների համեմատագրումը հաշվետու ընկերության ակտիվների հետ պետք է տեղի ունենա միայն այն դեպքում, երբ սեզմենտի ակտիվները կանոնավորապես տրամադրվում են գլխավոր գործառնական որոշում կայացնող մարմնին:

ՖՐՄՍ 13-ի եզրակացության հիմքերի վերաբերյալ փոփոխությունները պարզաբանում են, որ ՖՐՄՍ 13-ի թողարկումը և դրան հետևած փոփոխությունները ՅՐՄՍ 39-ում և ՖՐՄՍ 9-ում չեն հանգեցնում կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքի՝ առանց տոկոսադրույքի նշման, հաշիվ-ապրանքագրային արժեքով և առանց զեղչման չափման հնարավորության կասեցման, եթե զեղչման ազդեցությունը նշանակալի չէ: Այս փոփոխություններն ուժի մեջ են մտնում անմիջապես:

ՅՐՄՍ 16-ի և ՅՐՄՍ 38-ի փոփոխությունները վերացնում են առկա անհամապատասխանությունները կուտակված մաշվածության/ամորտիզացիայի հաշվառման գծով այն դեպքում, երբ հիմնական միջոցի միավորը կամ ոչ նյութական ակտիվը վերագնահատվում են: Ըստ վերանայված ստանդարտների պարզաբանվում է, որ համախառն հաշվեկշռային արժեքը ճշգրտվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի վերագնահատմանը համապատասխան եղանակով, և որ կուտակված մաշվածությունը/ամորտիզացիան իրենից ներկայացնում է համախառն հաշվեկշռային արժեքի և կուտակված մաշվածության գծով վնասների հաշվարկով դիտարկված հաշվեկշռային արժեքի միջև տարբերություն:

ՅՐՄՍ 24-ում տեղի ունեցած փոփոխությունները պարզաբանում են, որ առանցքային ղեկավար անձնակազմի ծառայություններ տրամադրող կառավարչական կազմակերպությունը հանդիսանում է հաշվետու ընկերության հետ փոխկապակցված կողմ: Համապատասխանաբար, հաշվետու ընկերությունը պետք է բացահայտի կառավարչական կազմակերպությանը առանցքային ղեկավար անձնակազմի ծառայությունների տրամադրման դիմաց վճարված կամ վճարման ենթակա բոլոր հաշվեգրված գումարները որպես կապակցված կողմերի հետ գործարքներ: Այնուամենայնիվ, նման փոխհատուցման բացահայտում չի պահանջվում:

**ՖՐՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2011-2013 թվականներ.** 2011-2013 թվականների ՖՐՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր ՖՐՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

ՖՐՄՍ 3-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ստանդարտը չի կիրառվում բոլոր տեսակի համատեղ ձեռնարկումների ձևավորման հաշվառման նկատմամբ տվյալ համատեղ ձեռնարկման ֆինանսական հաշվետվություններում:

ՖՐՄՍ 13-ի փոփոխությունը պարզաբանում է, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների խմբի գույք հիմունքով իրական արժեքի որոշման համար պորտֆելի բացառման շրջանակը ներառում է բոլոր պայմանագրերը, որոնք կարգավորվում են և հաշվառվում են համաձայն ՅՐՄՍ 39-ի կամ ՖՐՄՍ 9-ի, անկախ այն հանգամանքից, թե արդյոք տվյալ պայմանագրերը համապատասխանում են ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների սահմանմանը՝ համաձայն ՅՐՄՍ 32-ի:

ՅՐՄՍ 40-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՅՐՄՍ 40-ը և ՖՐՄՍ 3-ը փոխադարձաբար բացառելի չեն, և կարող է պահանջվել այդ երկու ստանդարտների միաժամանակ կիրառումը: Համապատասխանաբար, ներդրումային գույք ձեռք բերող ընկերությունը պետք է որոշի, թե արդյոք տվյալ գույքը համապատասխանում է ներդրումային գույքի սահմանմանը՝ համաձայն ՅՐՄՍ 40-ի, և արդյոք գործարքը համապատասխանում է ձեռնարկատիրական գործունեության միավորման սահմանմանը՝ համաձայն ՖՐՄՍ 3-ի:

Ընկերությունը չի իրականացրել որևէ այլ թողարկված, սակայն դեռևս չգործող ստանդարտի, փոփոխության կամ մեկնաբանության վաղ կիրառում:

**Հրապարակված, սակայն դեռևս չգործող նոր և վերանայված ՖՅՄՍ-ներ**

Ընկերությունը չի իրականացրել հրապարակված, սակայն դեռևս չգործող հետևյալ նոր և վերանայված ՖՅՄՍ-ների վաղ կիրառում:

<ul style="list-style-type: none"> <li>• ՖՅՄՍ 9. Ֆինանսական գործիքներ</li> <li>• ՖՅՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ</li> </ul>	<p>Գործում է 2018թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>
<ul style="list-style-type: none"> <li>• ՖՅՄՍ 16. Վարձակալություն</li> </ul>	<p>Գործում է 2019թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը, եթե ՖՅՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ ստանդարտը նույնպես կիրառվել է</p>
<ul style="list-style-type: none"> <li>• Փոփոխություններ ՌՅՄՍ 1 ստանդարտում. Բացահայտման նախաձեռնություն</li> <li>• Փոփոխություններ ՌՅՄՍ 16 և ՌՅՄՍ 38 ստանդարտում. Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում</li> <li>• Փոփոխություններ ՖՅՄՍ 10 և ՌՅՄՍ 28 ստանդարտում. Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում</li> <li>• Փոփոխություններ ՖՅՄՍ 10, ՖՅՄՍ 12 և ՌՅՄՍ 28 ստանդարտներում. Ներդրումային ընկերություններ. Համախմբման բացառությունների կիրառումը:</li> <li>• ՖՅՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014թթ. ցիկլ</li> </ul>	<p>Գործում է 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար, և թույլատրվում է դրանց ավելի վաղ կիրառումը:</p>

**ՖՅՄՍ 9. Ֆինանսական գործիքներ:** 2009թ. նոյեմբերին հրապարակված ՖՅՄՍ 9 նոր պահանջներ է սահմանել ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման համար: ՖՅՄՍ 9 փոփոխվել է 2010թ. հոկտեմբերին՝ ներառելով ֆինանսական պարտավորությունների դասակարգման և չափման, ինչպես նաև ապաճանաչման պահանջներ, ինչպես նաև՝ 2013թ. նոյեմբերին՝ սահմանելով հեջավորման ընդհանուր հաշվառման նոր պահանջներ: 2014թ. հուլիսին ՌՅՄՍԻՆ-ն թողարկեց ՖՅՄՍ 9-ի լրամշակված տարբերակը, որում հիմնականում ներկայացված են ֆինանսական ակտիվների արժեզրկման գծով պահանջները, ինչպես նաև ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման գծով սահմանափակ թվով փոփոխություններ: ՖՅՄՍ 9 նպատակ ունի փոխարինելու ՌՅՄՍ 39. Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը ստանդարտին:

ՖՅՄՍ 9-ի հիմնական պահանջները հետևյալն են՝

- **Ֆինանսական ակտիվների դասակարգումը և չափումը:** Ֆինանսական ակտիվները դասակարգվում են ըստ բիզնես մոդելի, որով դրանք պահվում են, ինչպես նաև ըստ պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի բնութագրերի: Մասնավորապես, պարտքային գործիքները, որոնք պահվում են բիզնես մոդելում, որի նպատակն է հավաքագրել պայմանագրով նախատեսված դրամական հոսքերը, և պայմանագրով նախատեսված դրամական հոսքերն իրենից ներկայացնում են միայն մայր գումար և դրա չվճարված մասի

նկատմամբ հաշվարկված տոկոսների հավաքագրում, սկզբնական ճանաչումից հետո սովորաբար չափվում են ամորտիզացված արժեքով:

ՀՀՄՍ 9-ի 2014թ. տարբերակը ներկայացնում է «իրական արժեք այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով» հասկացությունը բիզնես մոդելում պահվող պարտքային գործիքների մասով, որոնց նպատակն իրագործվում է թե պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրման, և թե՛ ֆինանսական ակտիվների վաճառքի միջոցով, և որոնք ունեն ֆինանսական ակտիվին բնորոշ պայմանագրային պայմաններ, ըստ որոնց առաջանում են դրամական հոսքերի որոշակի ժամկետներ, որոնք իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և դրա վրա կուտակված տոկոսի մարում՝ չափվող սկզբնական ճանաչումից հետո իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով: Բոլոր այլ պարտքային և կապիտալ ներդրումները չափվում են իրենց իրական արժեքով: Ավելին, ՀՀՄՍ 9-ի համաձայն, կազմակերպությունները կարող են անփոփոխ որոշում կայացնել հետագա փոփոխությունները ներկայացնելու սեփական կապիտալում (որը չի պահվում առևտրային նպատակներով) ներդրման իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, ընդ որում շահույթում կամ վնասում ճանաչելով միայն շահութաբաժինների տեսքով եկամուտը:

- **Ֆինանսական պարտավորությունների դասակարգումը և չափումը:** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են Նույն կերպ՝ ՀՀՄՍ 39-ի համաձայն, սակայն առկա են տարբերություններ կապված Ընկերության սեփական վարկային ռիսկի չափմանը վերաբերող պահանջների հետ: ՀՀՄՍ 9-ով պահանջվում է, որպեսզի ֆինանսական պարտավորության իրական արժեքի փոփոխությունը, որը վերագրելի է տվյալ պարտավորությանը բնորոշ վարկային ռիսկին, ներկայացվի այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, եթե պարտավորության վարկային ռիսկի փոփոխությունների ազդեցության ճանաչումը այլ համապարփակ ֆինանսական արդյունքում չի ստեղծում կամ մեծացնում շահույթում կամ վնասում հաշվառման անհամապատասխանությունը: Ֆինանսական պարտավորության վարկային ռիսկին վերագրվող՝ իրական արժեքի փոփոխությունները հետագայում չեն դասակարգվում շահույթում կամ վնասում:
- **Արժեզրկում:** ՀՀՄՍ 9-ի 2014թ. տարբերակում ներկայացվում է «Ակնկալվող վարկային վնասի» մոդելը ֆինանսական ակտիվների արժեզրկման չափման նպատակով՝ ի հակադրություն ՀՀՄՍ 39-ով նախատեսված հաշվեզրկված վարկային վնասի մոդելի: Ակնկալվող վարկային վնասի մոդելով պահանջվում է, որպեսզի Ընկերությունը հաշվառի ակնկալվող վարկային վնասները և այդ ակնկալվող վարկային վնասներում տեղի ունեցած փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ արտացոլելու համար վարկային ռիսկում սկզբնական ճանաչման պահից ի վեր տեղի ունեցած փոփոխությունները: Այլ կերպ ասած՝ վարկային պատահարի տեղի ունենալը այլևս անհրաժեշտ պայման չէ վարկային վնաս ճանաչելու համար:
- **Հեջավորման հաշվառում:** Ներկայացնում է հեջավորման հաշվառման նոր մոդել, որը նպատակ ունի սերտ համապատասխանություն ապահովել կազմակերպությունների կողմից ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի հեջավորման ընթացքում գործադրվող ռիսկերի կառավարման գործընթացներին: Ըստ ՀՀՄՍ 9-ի ավելի ճկուն մոտեցում է սկսել կիրառվել հեջային հաշվառման ենթակա գործարքների տեսակների մասով, մասնավորապես, ընդլայնվել են այն գործիքների տեսակները, որոնք կարող են դիտարկվել որպես հեջավորման գործիքներ, և ոչ ֆինանսական միավորների ռիսկի տարրերի տեսակները, որոնք ենթակա են հեջային հաշվառման: Ավելին, արդյունավետության ստուգումը փոխարինվել է «տնտեսական հարաբերությունների» սկզբունքով: Բացի այդ, այլևս չի պահանջվում հեջի արդյունավետության հետընթաց գնահատում: Ներդրվել են նաև Ընկերության ռիսկերի կառավարման գործունեության գծով բացահայտման լրացուցիչ պահանջներ:
- **Ապաճանաչում:** Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ապաճանաչման պահանջները շարունակելու են գործել ըստ ՀՀՄՍ 39-ի:

Այս ստանդարտն ուժի մեջ է մտնում 2018թ. հունվարի 1-ից և թույլ է տրվում դրա վաղ կիրառումը: Կախված ՀՀՄՍ 9-ի կիրառման ընտրված մոտեցումից, անցումային շրջանում տարբեր պահանջների գծով առաջին անգամ կիրառում կարող է տեղի ունենալ մեկ կամ մեկից ավելի ամսաթվերով:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՀՀՄՍ 9-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների գծով ներկայացված գումարների վրա: Սակայն, նպատակահարմար չէ ՀՀՄՍ 9-ի ազդեցության վերաբերյալ որչամիտ գնահատում տրամադրելը առանց մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու դրա ազդեցության վերաբերյալ:

**ՖՅՄՍ 15. Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ:** 2014թ. մայիսին հրապարակվել է ՖՅՄՍ 15-ը, որը միասնական համընդհանուր մոդել է սահմանում կազմակերպությունների կողմից հաճախորդների հետ պայմանագրերից գոյացած հասույթի հաշվառման համար: ՖՅՄՍ 15-ը ուժի մեջ մտնելուց հետո կփոխարինի ներկայումս գործող հասույթի ճանաչման ուղեցույցը, այդ թվում՝ ՀՅՄՍ 18 Հասույթ, ՀՅՄՍ 11 Կառուցման պայմանագրեր և դրանց հարակից մեկնաբանությունները:

ՀՅՄՍ 15-ի հիմնական սկզբունքը կայանում է նրանում, որ Ընկերությունը պետք է ճանաչի հասույթը՝ խոստացված ապրանքների կամ ծառայությունների՝ հաճախորդին փոխանցման փաստը ներկայացնելով այն գումարով, որն Ընկերությունը ակնկալում է ստանալ այդ ապրանքների և ծառայությունների դիմաց: Մասնավորապես, ստանդարտը ներկայացնում է որոշակի հիմունքներով մշակված հինգ քայլից բաղկացած մոդել, որը կիրառելի է հաճախորդների հետ ունեցած բոլոր պայմանագրերի գծով:

Մոդելում ներկայացված են հետևյալ հինգ քայլերը՝

- հաճախորդի հետ ունեցած պայմանագրի սահմանում,
- պայմանագրի կատարման պարտավորությունների սահմանում,
- գործարքի գնի որոշում,
- գործարքի գնի բաշխում պայմանագրի կատարման պարտավորությունների նկատմամբ,
- հասույթի ճանաչում այն ժամանակ (կամ այն բանից հետո), երբ Ընկերությունը բավարարում է պայմանագրի կատարման պարտավորությունը:

Ըստ ՖՅՄՍ 15-ի, Ընկերությունը ճանաչում է հասույթը այն ժամանակ, կամ այն բանից հետո, երբ պայմանագրի կատարման պարտավորությունը բավարարված է, այսինքն՝ երբ տվյալ կատարման պարտավորությանն առնչվող ապրանքների կամ ծառայությունների վերահսկողությունը փոխանցվում է հաճախորդին: Ավելի նկարագրական ուղեցույց է ավելացվել նաև այնպիսի թեմաների մասով, ինչպիսիք են՝ հասույթի ճանաչման պահը, փոփոխական հատուցման հաշվառումը, պայմանագրի կատարման և ձեռքբերման հետ կապված ծախսերը և մի շարք այլ հարակից հարցեր: Նաև ներկայացված են նոր բացահայտումներ հասույթի գծով:

Ընկերության ղեկավարությունը ակնկալում է, որ ՖՅՄՍ 15-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ հասույթի ճանաչման գումարի և ժամկետների վրա: Սակայն նպատակահարմար չէ ՖՅՄՍ 15-ի ազդեցության վերաբերյալ ողջամիտ գնահատում կատարել առանց դրա ազդեցության վերաբերյալ մանրամասն ուսումնասիրություն իրականացնելու:

**ՖՅՄՍ 16. Վարձակալություն:** ՖՅՄՍ 16-ով հաշվեկշռում ներկայացված վարձակալությունների մեծամասնությունը բերվում է մեկ միասնական մոդելի ներքո՝ նվազեցնելով տարբերակումը գործառնական և ֆինանսական վարձակալությունների միջև: Վարձատուի հաշվառումը, այնուամենայնիվ, մեծամասամբ մնում է անփոփոխ և պահպանվում է տարբերակումը գործառնական և ֆինանսական վարձակալությունների միջև:

ՖՅՄՍ 16-ով վարձակալը ճանաչում է օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն: Օգտագործման իրավունքով ակտիվը ճանաչվում է նույն կերպ, ինչ որ այլ ոչ ֆինանսական ակտիվները և համապատասխանաբար ճանաչվում է մաշվածություն, իսկ պարտավորության գծով հաշվեկշռվում է տոկոս: Վարձակալության գծով պարտավորությունը սկզբնապես չափվում է վարձակալական վճարի ներկա արժեքով, որը ենթակա է վճարման վարձակալության ժամկետի ընթացքում՝ զեղչելով այն վարձակալությանը բնորոշ դրույքաչափով, կամ վերջինիս անմիջական որոշումն անհնար լինելու դեպքում, վարձակալը օգտագործում է կուտակային փոխառության տոկոսադրույք:

Ինչ վերաբերում է ՀՅՄՍ 17-ին, վարձակալը դասակարգում է վարձակալությունը որպես գործառնական կամ ֆինանսական՝ ըստ դրանց բնույթի: Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն այն դեպքում, եթե փոխանցվում են ակտիվի սեփականությանը բնորոշ ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները: Այլապես, վարձակալությունը դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Ֆինանսական վարձակալության դեպքում վարձատուն ճանաչում է ֆինանսական եկամուտ վարձակալության ժամկետի ընթացքում՝ հիմք ընդունելով գուտ ներդրման գծով կայուն պարբերական շահութաբերությունը: Վարձատուն ճանաչում է գործառնական վարձակալության գծով վճարները որպես եկամուտ գծային հիմունքով, կամ այլ պարբերական հիմունքով, եթե վերջինս ավելի լավ է արտացոլում համապատասխան ակտիվի օգտագործումից ակնկալվող օգուտների սպառման



եղանակը:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ \$ՀՄՍ 16-ի կիրառումը ապագայում կարող է նշանակալի ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 1 ստանդարտում: Բացահայտման նախաձեռնություն.** ՀՀՄՍ 1-ում կատարված փոփոխությունները պարզաբանում են Էականություն հասկացության գործնական կիրառման սկզբունքը: Այս փոփոխությունները գործում են 2016թ. հունվարի 1-ին սկսվող կամ դրանից հետո ընկած տարեկան ժամանակահատվածների համար: Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Փոփոխություններ ՀՀՄՍ 16 և ՀՀՄՍ 38 ստանդարտներում. Մաշվածության և ամորտիզացիայի ընդունելի մեթոդների պարզաբանում:** ՀՀՄՍ 16-ում կատարված փոփոխությունները արգելում են կազմակերպություններին հիմնական միջոցի միավորների նկատմամբ կիրառել հասույթի հիման վրա մաշվածության մեթոդը: ՀՀՄՍ 38 ստանդարտի փոփոխությունները ներկայացնում են վիճարկելի ենթադրություն առ այն, որ հասույթը չի հանդիսանում ակտիվի ամորտիզացիայի համար պատշաճ հիմք: Այս ենթադրությունը կարող է վիճարկվել միայն այն դեպքում,  
ա) երբ ոչ նյութական ակտիվն արտահայտված է որպես հասույթի չափման միավոր, կամ  
բ) երբ հնարավոր է ցույց տալ, որ ոչ նյութական ակտիվի գծով հասույթը և դրա գծով տնտեսական օգուտների սպառումը սերտորեն փոխկապակցված են:

Այս փոփոխությունները կիրառվում են առաջընթաց կերպով 2016թ. սկսվող կամ դրան հաջորդող տարեկան ժամանակահատվածների համար: Ներկայումս Ընկերությունը իր հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների մաշվածության և ամորտիզացիայի համար կիրառում է գծային մեթոդը: Ընկերության ղեկավարության կարծիքով գծային մեթոդը առավել պատշաճ է ներկայացնում համապատասխան ակտիվներում պարունակվող տնտեսական օգուտների սպառումը և հետևաբար, չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

**Փոփոխություններ \$ՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 ստանդարտում. Ներդրողի և նրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև ակտիվների վաճառք կամ հատկացում:** \$ՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28 ստանդարտում տեղի ունեցած փոփոխություններն անդրադառնում են այն իրադրություններին, որոնցում առկա է ակտիվների վաճառք կամ հատկացում ներդրողի և դրա հետ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման միջև: Մասնավորապես, փոփոխություններով սահմանվում է, որ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման հետ գործարքում ձեռնարկատիրական միավոր չչարունակող և բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող դուստր ընկերությունում վերահսկողության կորստի արդյունքում առաջացող օգուտը կամ վնասը ճանաչվում են մայր ընկերության շահույթում կամ վնասում միայն այն չափով, որը վերաբերում է չկապակցված ներդրողների մասնակցությանը այդ ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման մեջ: Նմանապես, նախկին դուստր ընկերությունում (որը դարձել է բաժնեմասնակցության մեթոդով հաշվառվող ասոցիացված կազմակերպություն կամ համատեղ ձեռնարկում) պահպանված ներդրումների` մինչև իրական արժեք վերաչափման արդյունքում առաջացող օգուտները կամ վնասները ճանաչվում են նախկին մայր ընկերության շահույթում կամ վնասում միայն այն չափով, որը վերաբերում է չկապակցված ներդրողների մասնակցությանը նոր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկման մեջ:

Այս փոփոխությունները պետք է կիրառվեն առաջընթաց կերպով` այն գործարքների գծով, որոնք տեղի են ունեցել 2016թ. հունվարի 1-ին կամ դրան հաջորդող ժամանակաշրջաններում: Ընկերության ղեկավարությունն ակնկալում է որ \$ՀՄՍ 10 և ՀՀՄՍ 28-ի կիրառումը կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա ապագա ժամանակահատվածներում, եթե տեղի ունենան նման գործարքներ:

**Փոփոխություններ \$ՀՄՍ 10, \$ՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 ստանդարտներում. Ներդրումային ընկերություններ. Համախմբման բացառությունների կիրառումը:** \$ՀՄՍ 10, \$ՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 ստանդարտների փոփոխությունները պարզաբանում են, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գծով բացառություններ կարող են տրամադրվել մայր ընկերությանը, որը հանդիսանում է ներդրումային ընկերության դուստր ընկերություն, անգամ եթե ներդրումային ընկերությունը իր բոլոր դուստր ընկերությունները չափում է իրական արժեքով՝ համաձայն \$ՀՄՍ 10-ի: Փոփոխություններով նաև պարզաբանվում է, որ ներդրումային ընկերությանը վերջինիս ներդրումային գործունեության հետ կապված ծառայություններ մատուցող դուստր ընկերության համախմբման պահանջը ներդրումային ընկերության համար կիրառելի է միայն այն դուստր ընկերությունների մասով որոնք ինքնին ներդրումային ընկերություն չեն հանդիսանում:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ \$ՀՄՍ 10, \$ՀՄՍ 12 և ՀՀՄՍ 28 ստանդարտների փոփոխությունների կիրառումը որևէ ազդեցություն կունենան ֆինանսական հաշվետվությունների վրա:

**\$ՀՄՍ-ների տարեկան բարելավումներ՝ 2012-2014 թվականներ:** 2012-2014 թվականների \$ՀՄՍ-ների տարեկան բարելավումները ներառում են տարբեր \$ՀՄՍ-ների հետևյալ փոփոխությունները:

\$ՀՄՍ 5-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ակտիվի վերադասակարգումը կամ օտարումը՝ վաճառքի համար պահվող ակտիվից սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի կամ հակառակը, չպետք է համարվի վաճառքի պլանի կամ սեփականատերերին բաշխման պլանի փոփոխություն և պետք է կիրառվեն օտարման նոր մեթոդի հանդեպ կիրառելի դասակարգման, ներկայացման և չափման պահանջները: Ավելին, այս փոփոխություններով պարզաբանվում է, որ ակտիվները, որոնք այլևս չեն համապատասխանում սեփականատերերին բաշխման համար պահվող ակտիվի չափանիշներին, պետք է դիտարկվեն նույն կերպ, ինչ ակտիվները, որոնք դադարում են դասակարգվել որպես վաճառքի համար պահվող: Այս փոփոխությունը պետք է կիրառվի առաջընթաց կերպով:

\$ՀՄՍ 7-ի փոփոխությունները լրացուցիչ պարզաբանում են, թե արդյոք սպասարկման պայմանագիրն իրենից ներկայացնում է փոխանցված ակտիվում շարունակական մասնակցություն՝ փոխանցված ակտիվների գծով պահանջվող բացահայտումների տեսանկյունից: Ի լրումն, \$ՀՄՍ 7-ի փոփոխությունները նպատակ ունեն պարզաբանելու, որ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվանցման բացահայտման պահանջները, թեև հստակորեն պարտադիր չէ ներկայացնել բոլոր միջանկյալ ժամանակահատվածների կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում, սակայն կարող է պահանջվել այս բացահայտումների ներառումը կրճատ միջանկյալ ֆինանսական հաշվետվություններում ՀՀՄՍ 34-ի հետ համապատասխանություն ապահովելու տեսանկյունից: Այս փոփոխությունը պետք է կիրառվի հետընթաց կերպով:

ՀՀՄՍ 19-ի փոփոխությունները պարզաբանում են, որ բարձր որակի կորպորատիվ պարտատոմսերը, որոնք օգտագործվում են կենսաթոշակային հատուցումների գեղչատուկոսի գնահատման համար, պետք է թողարկվեն հատուցումների վճարման արժույթով: Փոփոխությունները կիրառվում են տվյալ փոփոխությունների առաջին անգամ կիրառմամբ ներկայացված ֆինանսական հաշվետվություններում՝ սկսած ամենավաղ համեմատական ժամանակաշրջանից:

ՀՀՄՍ 34-ի փոփոխությունները պարզաբանում են, որ ՀՀՄՍ 34-ով պահանջվող տեղեկատվությունը, որը ներկայացված է միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների որևէ այլ մասում, սակայն միջանկյալ ֆինանսական հաշվետվություններից դուրս, պետք է խաչաձև հղման միջոցով ներկայացվի միջանկյալ հաշվետվության և միջանկյալ ֆինանսական հաշվետվությունների այլ մասերի միջև, որը պետք է հասանելի լինի օգտագործողներին միևնույն պայմաններով և միևնույն ժամանակ, ինչ միջանկյալ ֆինանսական հաշվետվությունները:

Ընկերության ղեկավարությունը չի ակնկալում, որ այս փոփոխությունների կիրառումը զգալի ազդեցություն կունենա ֆինանսական հաշվետվությունների վրա:

## 4. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

### 4.1 Պատրաստման հիմունքները

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են այն ելթադրության վրա, որ Ընկերությունը գործում է անընդհատության սկզբունքով և կշարունակի գործել տեսանելի ապագայում:

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հազար ՀՀ դրամով, եթե այլ բան նշված չէ:

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են պատմական արժեքի հիման վրա, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, ինչպես ներկայացված է ստորև հաշվապահական հաշվառման քաղաքականությունում:

Պատմական արժեքը սովորաբար հիմնված է ակտիվների և ծառայությունների դիմաց տրված հատուցման իրական արժեքի վրա:

Իրական արժեքն այն գումարն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքի արդյունքում չափման ամսաթվի դրությամբ կստացվեր ակտիվը վաճառելիս, կամ կվճարվեր պարտավորությունը փոխանցելիս՝ անկախ նրանից, թե արդյոք գինը ուղղակիորեն դիտարկելի է կամ գնահատվել է՝ օգտագործելով այլ գնահատման մեթոդներ: Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը գնահատելիս՝ Ընկերությունը հաշվի է առնում ակտիվի կամ պարտավորության բնութագրերը, եթե շուկայի մասնակիցները այդ բնութագրերը հաշվի կառնեին չափման ամսաթվի դրությամբ ակտիվի կամ պարտավորության գինը որոշելիս: Այս ֆինանսական հաշվետվություններում չափման և/կամ այլ բացահայտումների նպատակով իրական արժեքը որոշվում է նման սկզբունքներով, բացառությամբ վարձակալության գործարքներից, որոնք նկարագրված են ՀՀՄՍ 17-ում և չափումներից, որոնք թեև համանման են իրական արժեքին, սակայն իրական արժեքով չեն, մասնավորապես օգտագործման արժեքով են, ՀՀՄՍ 36-ի համաձայն:

Բացի այդ, ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից իրական արժեքով չափումները դասակարգվում են երեք մակարդակի՝ հիմք ընդունելով իրական արժեքով չափումների ընթացքում օգտագործված ելակետային տվյալների դիտարկելիության աստիճանը և իրական արժեքի ամբողջությամբ չափման ժամանակ օգտագործված տվյալների նշանակալիությունը: Իրական արժեքի հիերարխիան ունի հետևյալ երեք մակարդակները՝

- Մակարդակ 1 - նույն ակտիվների և պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գները (չճշգրտված), որոնք Ընկերությունը կարող է գնահատել չափման ամսաթվի դրությամբ,
- Մակարդակ 2 - Մակարդակ 1-ում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի և պարտավորության համար դիտարկելի են թե ուղղակիորեն և թե անուղղակիորեն, և
- Մակարդակ 3 - ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկվող շուկայական տվյալների վրա:

Ընկերությունն իր հաշվապահական գրառումները վարում է ըստ հաշվապահական հաշվառման տեղական օրենսդրության պահանջների: Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են տեղական օրենսդրության համաձայն վարվող հաշվապահական գրառումների հիման վրա և ճշգրտվել՝ ՀՀՄՍ պահանջներին համապատասխանություն ապահովելու համար:

### Գործառնական և ներկայացման արժույթ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված միավորները չափվում են այն տնտեսական միջավայրում գործող արժույթով, որում Ընկերությունն իրականացնում է իր գործունեությունը («Գործառնական արժույթ»): Ընկերության գործառնական արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ դրամն է (այսուհետ՝ դրամ): Ողջ ֆինանսական

տեղեկատվությունը ներկայացված է հազար ՀՀ դրամի ճշգրտությամբ, եթե այլ բան նշված չէ:

## Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն: Եկամուտները և ծախսերը չեն հաշվանցվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե դա չի պահանջվում կամ թույլատրվում որևէ հաշվապահական հաշվառման ստանդարտով կամ մեկնաբանությամբ և հստակ բացահայտված չէ Ընկերության հաշվապահական քաղաքականության մեջ:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են ստորև:

### 4.2 Հասույթի ճանաչում

#### Տոկոսային եկամուտ

Ֆինանսական ակտիվներից տոկոսային եկամուտները ճանաչվում են, երբ հավանական է, որ տևտեսական օգուտները կհոսեն Ընկերություն և եկամտի գումարը կարող է արժանահավատորեն չափվել: Տոկոսային եկամուտները և ծախսերը ճանաչվում են հաշվեգրման սկզբունքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների խմբի) ամորտիզացված արժեքի հաշվարկման և համապատասխան ժամանակահատվածի կտրվածքով տոկոսային ծախսի և տոկոսային եկամտի բաշխման մեթոդն է:

Արդյունավետ տոկոսադրույթն այն տոկոսադրույթն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկի ստացումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույթի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարզակվճարներ կամ զեղչեր) պարտքային գործիքի ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ, ըստ անհրաժեշտության, ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա զուտ հաշվեկշռային արժեքին:

Այն դեպքերում, երբ տեղի է ունենում ֆինանսական ակտիվի կամ նմանատիպ ակտիվների խմբի արժեքի նվազում արժեզրկումից կորստի հետևանքով, տոկոսային եկամուտն այդուհետև ճանաչվում է՝ կիրառելով այն տոկոսադրույթը, որը կիրառվել էր արժեզրկումից կորուստը չափելու նպատակով ապագա դրամական հոսքերը զեղչելիս:

Իրական արժեքով չափվող ակտիվների գծով ստացված տոկոսները դասակարգվում են որպես տոկոսային եկամուտ:

#### Ակտիվների կառավարման գործունեություն

Ակտիվների կառավարման վճարները հիմնված են Ընկերության կողմից ղեկավարվող ֆոնդերում ներդրված հաճախորդի զուտ ակտիվների արժեքի օրական մնացորդների վրա:

Ընկերության կառավարման և պահառության ներքո գտնվող ակտիվները չեն հանդիսանում Ընկերության ակտիվներ և հետևաբար չեն ճանաչվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ընկերությունը չի ենթարկվում նման տեղաբաշխման հետ կապված որևէ վարկային ռիսկի, քանի որ այն չի երաշխավորում այդ ներդրումները:

#### Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով ներդրումներից եկամուտ

Ընկերությունը ներդրումներ է կատարում ֆոնդերի, այդ թվում՝ իր կառավարման ներքո գտնվող ֆոնդերի փայերում: Փայերը ճանաչվում են ակտիվ շուկայում գնանշված արժեքով կամ ձեռք բերված մեկ փային բաժին ընկնող զուտ ակտիվների արժեքով և հետագայում չափվում են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով: Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում շահույթի կամ վնասի միջոցով իրական

արժեքով չափվող ֆինանսական գործիքներից զուտ օգուտը ներառում է իրական արժեքի բոլոր իրացված և չիրացված փոփոխությունները, արտաժույթի փոխարժեքային տարբերությունները, սակայն չի ներառում տոկոսների և շահաբաժինների տեսքով եկամուտը:

### 4.3 Արտարժույթ

Արտարժույթով իրականացվող գործարքները փոխարկվում են գործառնական արժույթի՝ համապատասխան արտարժույթի համար գործարքի օրվա դրությամբ բորսայի փակման փոխարժեքով, դրա բացակայության դեպքում՝ ՀՀ ԿԲ հայտարարած միջին փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են գործառնական արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերահաշվարկվում են գործառնական արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ առկա փոխարժեքով:

Արտարժույթային հոդվածների վերահաշվարկումից (վերագնահատումից) առաջացող փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես զուտ օգուտ (վնաս) արտարժույթի փոխարժեքային տարբերություններից, բացառությամբ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների, որոնք ճանաչվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների վերաչափումից առաջացող զուտ օգուտի կամ վնասի տարր:

Սույն ֆինանսական հաշվետվություններում Ընկերության կողմից օգտագործված փոխարժեքները ներկայացված են ստորև՝

	Միջին փոխարժեք		Սկիզբ փոխարժեք	
	2015թ.	2014թ.	31 դեկտեմբերի, 2015թ.	31 դեկտեմբերի, 2014թ.
ՀՀ դրամ/1 ԱՄՆ դոլար	477.82	415.75	483.75	474.97
ՀՀ դրամ/1 Եվրո	530.84	552.09	528.69	577.47

### 4.4 Ֆինանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է ֆինանսական ակտիվները և պարտավորությունները, երբ այն դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների սովորական եղանակով գնումները և վաճառքը հաշվառվում են վերջնահաշվարկի ամսաթվի դրությամբ: Ֆինանսական գործիքների սովորական եղանակով գնումները կամ վաճառքն իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվների այն գնումները կամ վաճառքը, որոնք պահանջում են ակտիվների մատակարարումը շուկայում ընդունված պայմաններով սահմանված կարգով:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**Ֆինանսական ակտիվներ:** Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ, վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ, և տրամադրված վարկեր, դեբիտորական պարտքեր: Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվների ձեռքբերման բնույթից և նպատակից և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

**Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:** Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական

արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվը պահվում է վաճառքի համար կամ նախատեսված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ակտիվ:

Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում տեսանելի ապագայում վաճառքի նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը նախատեսված չէ կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական ակտիվը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվներից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական ակտիվը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, Ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն, և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսը և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: ճանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվները ներկայացվում են իրական արժեքով՝ ներառյալ ողջ օգուտը կամ վնասները, որոնք առաջանում են եկամուտներում կամ ծախսերում ճանաչվող վերաչափման արդյունքում: Շահույթում կամ վնասում ճանաչվող զուտ օգուտը կամ վնասները ներառում են ֆինանսական ակտիվի գծով վաստակած բոլոր շահաբաժինները և տոկոսները և ներառվում են «այլ օգուտներ և վնասներ» և «տոկոսային եկամուտ» տողում, շահույթի, վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով (տես՝ ծան. 20):

**Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:** Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնց գծով Ընկերությունն ունի մինչև մարման ժամկետը պահելու հաստատուն մտադրություն և կարողություն: Սկզբնական ճանաչումից հետո մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեզրկումը:

Եթե Ընկերությունը որոշեր վաճառել կամ վերադասակարգել մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների զգալի մասը նախքան դրանց մարման ժամկետը (բացառությամբ հատուկ հանգամանքների առկայության), ողջ դասը կորակագրվեր և պետք է դասակարգվեր որպես վաճառքի համար մատչելի: Ավելին, Ընկերությանը կարգելվեր ընթացիկ տարում և դրան հաջորդող երկու տարիների ընթացքում դասակարգել որևէ ֆինանսական ակտիվ որպես մինչև մարման ժամկետը պահվող ակտիվ:

**Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:** Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ են, որոնք դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի, կամ չեն դասակարգվում որպես (ա) վարկեր և դեբիտորական պարտքեր, (բ) մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ (գ) իրական արժեքով շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ընկերության կողմից պահվող հետզևող ցուցակված պարտատոմսերը, որոնք գնվում և վաճառվում են ակտիվ շուկայում, դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի և

յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ներկայացվում իրական արժեքով: Ընկերությունը նաև ներդրումներ ունի չցուցակված բաժնետոմսերում, որոնք չեն վաճառվում ակտիվ շուկայում, սակայն նույնպես դասակարգվում են որպես վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ և յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ներկայացվում իրական արժեքով (քանի որ դեկավարությունը կարծում է, որ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել): Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով (տես՝ ծան. 20): Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները, որոնք վերաբերում են արտարժույթի փոխարժեքի փոփոխություններին, արդյունավետ տոկոսադրույթի մեթոդի օգտագործմամբ հաշվարկված տոկոսային եկամուտը և վաճառքի համար մատչելի բաժնային գործիքներից ստացված շահաբաժինները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքի այլ փոփոխությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում և ներկայացվում ներդրումների վերագնահատման պահուստ հոդվածում: Երբ ներդրումն օտարվում է կամ համարվում է արժեզրկված, ներդրումների վերագնահատման պահուստի հոդվածում նախկինում ճանաչված կուտակային օգուտը կամ վնասը վերադասակարգվում է շահույթում կամ վնասում:

Արտարժույթով արտահայտված վաճառքի համար մատչելի դրամային ֆինանսական ակտիվների իրական արժեքը որոշվում է այդ արտարժույթով և փոխարկվում հաշվետու ամսաթվի վերջի դրությամբ գործող սփոթ փոխարժեքով: Ծահույթում կամ վնասում ճանաչված՝ արտարժույթի փոխարժեքից օգուտները և վնասները որոշվում են դրամային ակտիվի ամորտիզացված արժեքի հիման վրա: Արտարժույթի փոխարժեքից այլ օգուտները և վնասները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Վաճառքի համար մատչելի սեփական կապիտալում ներդրումները, որոնք չունեն ակտիվ շուկայում գնանշված շուկայական արժեք և որոնք իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել, չափվում են ինքնարժեքով՝ հանած արժեզրկումից կորուստները յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջում:

**Վարկեր և դեբիտորական պարտքեր:** Առևտրային դեբիտորական պարտքերը, Վարկերը և այլ դեբիտորական պարտքերը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք ունեն ֆիքսված կամ որոշելի վճարումներ, որոնք գնանշված չեն ակտիվ շուկայում (այդ թվում՝ ՀՀ Կենտրոնական բանկում մնացորդները, բանկերի նկատմամբ պահանջները, հաճախորդներին տրված վարկերը և այլ ֆինանսական ակտիվները): Վարկերը և դեբիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեզրկումը: Տոկոսային եկամուտը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, բացառությամբ կարճաժամկետ դեբիտորական պարտքերի, որոնց դեպքում տոկոսի ճանաչումը Էական ազդեցություն չէր ունենա:

**Ֆինանսական ակտիվների արժեզրկում:** Ֆինանսական ակտիվները, բացի շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջին գնահատվում են արժեզրկման հայտանիշների հայտնաբերման նպատակով: Ֆինանսական ակտիվները համարվում են արժեզրկված, եթե առկա է օբյեկտիվ վկայություն այն մասին, որ ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքեր կարող են ազդեցություն ունենալ ներդրման գծով գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Որպես վաճառքի համար մատչելի դասակարգված՝ կապիտալի ներդրումներում արժեթղթի իրական արժեքի զգալի կամ տևական անկումը իր ինքնարժեքից համարվում է արժեզրկման օբյեկտիվ վկայություն:

Բոլոր այլ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող են համարվել հետևյալ հայտանիշները.

- թողարկողի կամ պայմանագրային կողմի զգալի ֆինանսական դժվարությունները, կամ
- պայմանագրի խախտումը, մասնավորապես տոկոսների կամ մայր գումարի վճարման ուշացումը կամ չկատարումը,

- փոխառուի կողմից սնանկության կամ ֆինանսական վերակազմակերպման գործընթացի նախաձեռնումը, կամ
- ֆինանսական դժվարությունների արդյունքում տվյալ ֆինանսական ակտիվի գծով ակտիվ շուկայի անհետացումը:

Ֆինանսական ակտիվների որոշ կատեգորիաների համար, ինչպիսիք են վարկերը և դեբիտորական պարտքերը, ակտիվները, որոնք ըստ գնահատականների առանձին արժեզրկված չեն, ի լրումն գնահատվում են նաև խմբային արժեզրկման տեսանկյունից: Դեբիտորական պարտքի պորտֆելի արժեզրկման օբյեկտիվ վկայություն կարող է համարվել Ընկերության նախկին փորձը վճարումների հավաքագրման գծով, հետաձգված վճարումների թվի աճը պորտֆելում ինչպես նաև ազգային կամ տեղական մակարդակում դիտարկելի փոփոխությունները, որոնք կարող են հանգեցնել դեբիտորական պարտքի անհավաքագրելիության:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով ծախսի գումարը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ գեղչված ֆինանսական ակտիվի համար սկզբնապես սահմանված տոկոսադրույքով:

Սկզբնական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման գծով ծախսի գումարը իրենից ներկայացնում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և գնահատված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունը՝ գեղչված շուկայում համանման ֆինանսական ակտիվի եկամտաբերության դրույթաչափով: Նման արժեզրկումից կորուստը ենթակա չէ հակադարձման հաջորդ ժամանակաշրջաններում:

Ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է արժեզրկումից կորստի չափով անմիջականորեն բոլոր ակտիվների գծով, բացառությամբ վարկերի և դեբիտորական պարտքերի, որոնք դեպքում հաշվեկշռային արժեքը նվազեցվում է պահուստային հաշվի միջոցով: Երբ ակտիվը կամ դեբիտորական պարտքը համարվում է անհուսալի, այն դուրս է գրվում պահուստային հաշվի միջոցով: Հետագայում դուրս գրված գումարների վերականգնումը կատարվում է դրանք պահուստային հաշվին կրեդիտագրելու միջոցով: Պահուստային հաշվի հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Երբ վաճառքի համար պահվող ֆինանսական ակտիվը համարվում է արժեզրկված, այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտները կամ վնասները վերադասակարգվում են որպես տվյալ ժամանակաշրջանի շահույթ կամ վնաս:

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների համար, այն դեպքում, եթե հաջորդող ժամանակաշրջանում արժեզրկումից կորստի գումարը նվազում է և նվազեցումը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկման ճանաչումից հետո տեղի ունեցող դեպքերին, նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է շահույթի կամ վնասի միջոցով այնքանով, որքանով արժեզրկման ամսաթվի դրությամբ ներդրման հաշվեկշռային արժեքը չի գերազանցում ամորտիզացված արժեքն այն դեպքում, եթե այդ արժեզրկումը ճանաչված չլիներ:

Վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերի գծով արժեզրկումից կորուստները, որոնք նախկինում ճանաչվել են շահույթում կամ վնասում, չեն հակադարձվում շահույթի կամ վնասի միջոցով: Արժեզրկումից կորստին հաջորդող՝ իրական արժեքի ցանկացած աճ ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և ներկայացվում ներդրումների վերագնահատման պահուստ հոդվածում:

Վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերի գծով արժեզրկումից կորուստները հետագայում հակադարձվում են շահույթի կամ վնասի միջոցով, եթե ներդրման իրական արժեքը կարող է օբյեկտիվորեն վերագրվել արժեզրկումից կորստի ամսաթվին հաջորդող դեպքի:

**Ֆինանսական ակտիվների ապաճանաչումը:** Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվները, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ երրորդ կողմին է փոխանցվում ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական միջոցների նկատմամբ իրավունքը: Եթե Ընկերությունը չի փոխանցում և չի պահպանում ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն և հատույցները, սակայն պահպանում է փոխանցված



ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, ապա Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը, ինչպես նաև դրա հետ կապված պարտավորությունը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվում: Եթե Ընկերությունը պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ Եուրոյան, բոլոր ռիսկերն և հատուցները, ապա Ընկերությունը պետք է շարունակի ճանաչել ֆինանսական ակտիվը:

Ֆինանսական ակտիվը ամբողջությամբ ապաճանաչելիս հաշվեկշռային արժեքի և ստացված հատուցման այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում նախկինում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարի տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում:

Եթե Ընկերության շարունակվող ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի միայն մի մասով է (օրինակ՝ երբ Ընկերությունը պահպանում է փոխանցված ակտիվի մի մասը հետգնելու օպցիոնը), ապա Ընկերությունը ֆինանսական ակտիվի նախկին հաշվեկշռային արժեքը բաշխում է այն մասի, որն այն շարունակում է ճանաչել շարունակվող ներգրավվածության ներքո, և այն մասի միջև, որն այն այլևս չի ճանաչում՝ փոխանցման ամսաթվի դրությամբ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա: Այլևս չճանաչվող մասի վրա բաշխված հաշվեկշռային արժեքի և այլևս չճանաչվող մասի դիմաց ստացված հատուցման և դրա վրա բաշխված այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված որևէ օգուտի կամ վնասի գումարների տարբերությունը պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում: Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում ճանաչված կուտակված օգուտը կամ վնասը բաշխվում է այն մասի, որը շարունակվում է ճանաչվել, և այլևս չճանաչվող մասի միջև՝ այդ մասերի հարաբերական իրական արժեքների հիման վրա:

### Ֆինանսական պարտավորություններ

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթում կամ վնասում իրական արժեքով չափվող կամ այլ ֆինանսական պարտավորություններ:

**Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորություններ:** Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այն դեպքում, երբ ֆինանսական պարտավորությունը պահվում է վաճառքի համար կամ դասակարգվում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ֆինանսական պարտավորությունը դասակարգվում է որպես վաճառքի համար պահվող, եթե՝

- այն ձեռք է բերվել հիմնականում կարճաժամկետ կտրվածքով հետգնման նպատակով, կամ
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ ղեկավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- այն հանդիսանում է ածանցյալ գործիք, որը չի նախատեսված կամ չի օգտագործվում որպես հեջավորման գործիք:

Ֆինանսական պարտավորությունը, բացի վաճառքի համար պահվող ֆինանսական պարտավորություններից, կարող է ճանաչման պահին դասակարգվել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող, եթե՝

- նման դասակարգումը բացառում, կամ զգալիորեն կրճատում է չափման կամ ճանաչման անհամապատասխանությունը, որն այլապես կառաջանար, կամ
- ֆինանսական պարտավորությունը կազմում է ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների կամ այդ երկուսի խմբի մի մաս, որը կառավարվում է, և դրա կատարողականը գնահատվում է իրական արժեքի հիմունքով, ընկերության փաստաթղթավորված ռիսկերի կառավարման կամ ներդրումային ռազմավարության համաձայն և խմբավորման վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվում է ներքին կարգով՝ այդ հիմունքներով, կամ
- այն կազմում է պայմանագրի մի մաս, որը պարունակում է ներկառուցված ածանցյալ գործիքներից մեկը կամ մի քանիսի և ՀՀՄՍ 39. *Ֆինանսական գործիքներ: Ծանաչումը և չափումը* թույլ է տալիս ողջ պայմանագիրը (ակտիվները կամ պարտավորությունները) դասակարգել որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող:

Ճահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական պարտավորությունները ներկայացվում են իրական արժեքով, իսկ դրանց վերաչափումից առաջացող բոլոր օգուտները կամ վնասները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Ճահույթում կամ վնասում ճանաչված գուտ օգուտը կամ վնասը ներառում է ցանկացած տոկոս, որը վճարվել է ֆինանսական պարտավորության գծով և ներառվում է «տոկոսային ծախս» տողում՝ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների հաշվետվությունում: Իրական արժեքը որոշվում է նկարագրված եղանակով (տես ծան. 20):

**Այլ ֆինանսական պարտավորություններ.** այլ ֆինանսական պարտավորությունները (ներառյալ գանձապետական գործիքները, բանկային և հաճախորդների ավանդները, հետգնման պայմանագրերը, թողարկված պարտքային արժեթղթերը, այլ փոխառու միջոցները, ստորադաս պարտավորությունները և այլ ֆինանսական պարտավորությունները) սկզբնապես չափվում են իրական արժեքով, առանց գործարքի ծախսերի:

Այլ ֆինանսական պարտավորությունները հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ տոկոսային ծախսը ճանաչելով արդյունավետության հիմունքով:

Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդն իրենից ներկայացնում է որոշակի ժամանակահատվածում ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեքի հաշվարկի մեթոդ: Արդյունավետ տոկոսադրույքն այն տոկոսադրույքն է, որը ճշգրտորեն զեղչում է ապագա գնահատված կանխիկ վճարումները (ներառյալ բոլոր տեսակի միջնորդավճարները և ստացված կամ վճարված գումարները, որոնք կազմում են արդյունավետ տոկոսադրույքի անբաժանելի մասը, գործարքի հետ կապված ծախսերը և այլ պարգևավճարներ կամ զեղչեր) ֆինանսական պարտավորության ակնկալվող գործողության ժամանակահատվածի ողջ ընթացքում, կամ (ըստ անհրաժեշտության) ավելի կարճ ժամանակահատվածում՝ հասցնելով սկզբնական ճանաչման պահին առկա գուտ հաշվեկշռային արժեքին:

**Ֆինանսական պարտավորությունների ապաճանաչում.** Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունները միայն այն ժամանակ, երբ Ընկերության պարտականությունները մարվում են, չեղյալ են համարվում կամ ուժը կորցնում են: Երբ միևնույն փոխատուի հանդեպ ունեցած ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է այլ ֆինանսական պարտավորությամբ, որի պայմաններն էականորեն տարբերվում են նախորդից, կամ եթե տեղի է ունեցել առկա պարտավորության պայմանների էական փոփոխություն, ապա նմանատիպ փոխանակումը կամ փոփոխությունը ճանաչվում է որպես սկզբնական պարտավորության ապաճանաչում և նոր պարտավորության ճանաչում: Ապաճանաչված ֆինանսական պարտավորության հաշվեկշռային արժեքի և վճարված և վճարվելիք հատուցման տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

#### 4.5 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված դրամական միջոցները և բանկերում մնացորդները իրենցից ներկայացնում են բանկում պահվող կանխիկ միջոցներ՝ 3 ամիս կամ պակաս ժամկետայնությամբ: Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության տեսանկյունից դրամական միջոցները և դրանց համարժեքները բաղկացած են վերոնշյալից՝ հանած բանկային օվերդրաֆտները:

#### 4.6 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ներկայացված են սկզբնական արժեքով, հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեզրկումից կորուստները:

Մաշվածությունը ճանաչվում է այնպես, որ դուրս գրվի ակտիվների սկզբնական արժեքը, հանած օգտակար ծառայության ընթացքում դրանց մնացորդային արժեքները՝ օգտագործելով գծային մեթոդը: Գնահատված օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության մեթոդները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ՝ բոլոր տեսակի գնահատումներում փոփոխությունների ազդեցությունը հաշվառելով առաջընթաց

սկզբունքով: Հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են՝

Գրասենյակային գույք	5-10 տարի
Համակարգչային սարքավորումներ	3-10 տարի

Հիմնական միջոցների տարրը ապաճանաչվում է այն օտարելիս կամ երբ այդ ակտիվի շարունակական օգտագործումից այլևս տնտեսական օգուտներ չեն ենթադրվում: Հիմնական միջոցների վաճառքից կամ շրջանառությունից դուրսբերումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ և ցանկացած օգուտ կամ վնաս հաշվարկվում է որպես ակտիվի ապաճանաչումից ստացված միջոցների և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում շահույթում կամ վնասում:

#### **4.7 Ոչ նյութական ակտիվներ**

##### ***Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներ***

Որոշակի օգտակար ծառայության ժամկետ ունեցող՝ առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները: Ամորտիզացիան օգտակար ծառայության ժամանակահատվածում հաշվարկվում է ուղիղ գծային մեթոդով: Օգտակար ծառայության ժամանակահատվածը և ամորտիզացիայի հաշվարկման մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու տարվա վերջում՝ գնահատումներում ցանկացած փոփոխություն հաշվառելով առաջընթաց կերպով: Անորոշ օգտակար ծառայության ժամկետով ոչ նյութական ակտիվները, որոնք ձեռք են բերվել առանձին, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեզրկումից կորուստները:

Ոչ նյութական ակտիվներն ապաճանաչվում են դրանք օտարելիս կամ երբ այլևս դրանց օգտագործումից կամ օտարումից չեն ակնկալվում հետագա տնտեսական օգուտներ: Ապաճանաչումից օգուտները կամ վնասները չափվում են որպես ակտիվի օտարումից զուտ մուտքերի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ ակտիվն ապաճանաչվում է:

Ոչ նյութական ակտիվների գնահատված օգտակար ծառայության ժամկետը 5 տարի է:

#### **4.8 Ոչ ընթացիկ ակտիվների արժեզրկում**

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի վերջում Շնկերությունը վերանայում է իր նյութական և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքները՝ որոշելու համար, թե արդյոք կա որևէ հայտանիշ, որ այս ակտիվներում եղել են արժեզրկումից կորուստներ: Եթե առկա է որևէ նմանատիպ հայտանիշ, ապա ակտիվների փոխհատուցվող գումարը գնահատվում է՝ արժեզրկումից կորուստները (եթե այդպիսիք կան) որոշելու նպատակով: Եթե առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, Շնկերությունը գնահատում է այն դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարը, որին այդ ակտիվը պատկանում է: Եթե հնարավոր է որոշել բաշխման ողջամիտ և հետևողական հիմունք, ապա կորպորատիվ ակտիվները ևս բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին, այլապես դրանք բաշխվում են դրամաստեղծ ակտիվների փոքրագույն խմբին, որոնց համար կարելի է որոշել ողջամիտ և հետևողական հիմունք:

Անորոշ օգտակար ծառայությամբ և օգտագործման համար դեռևս ոչ մատչելի ոչ նյութական ակտիվները ստուգվում են արժեզրկման առկայության համար առնվազն տարեկան մեկ անգամ, ինչպես նաև՝ երբ առկա է հայտանիշ, որ ակտիվը կարող է արժեզրկված լինել:

Փոխհատուցվող գումարն իրական արժեքից (հանած վաճառքի հետ կապված ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնն է: Օգտագործման արժեքը գնահատելիս ակնկալվող ապագա դրամական հոսքերը բերվում են ներկա արժեքի՝ կիրառելով մինչև հարկումը տոկոսադրույք, որն արտացոլում է փողի ժամանակային արժեքի ընթացիկ շուկայական

գնահատումը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որոնցով ապագա գնահատված հոսքերը չեն ճշգրտվել:

Եթե ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) փոխհատուցվող գումարը գնահատվում է հաշվեկշռային արժեքից ցածր, ապա հաշվեկշռային արժեքն իջեցվում է մինչ փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստն անհապաղ ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով: Վերջինիս դեպքում արժեզրկումից կորուստը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի նվազում:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչ վերանայված փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ավելացումից հետո հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը կորոշվեր, եթե նախորդ ժամանակաշրջաններում ակտիվի (կամ դրամաստեղծ միավորի) գծով արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորուստի հակադարձումը անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում, եթե տվյալ ակտիվը չի հաշվառվում վերագնահատված արժեքով, ինչի դեպքում արժեզրկումից կորուստի հակադարձումը դիտարկվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

#### 4.9 Հարկում

Շահութահարկի գծով ծախսը ներառում է ընթացիկ հարկի գծով պարտավորությունը և հետաձգված հարկը:

##### **Ընթացիկ հարկ**

Ընթացիկ հարկի գծով պարտավորությունը հիմնված է ժամանակահատվածի հարկվող շահույթի վրա: Հարկվող շահույթը տարբերվում է «շահույթ մինչև հարկումը» հասկացությունից՝ եկամտի և ծախսի այնպիսի տարրերի պատճառով, որոնք հարկման կամ նվազեցման ենթակա են այլ հաշվետու ժամանակաշրջաններում, ինչպես նաև այն տարրերի, որոնք երբևէ չեն հարկվելու կամ նվազեցվելու: Ընկերության ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվարկվում են՝ կիրառելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ուժի մեջ մտած կամ, ըստ էության, ուժի մեջ մտած հարկի դրույթաչափերը:

##### **Հետաձգված հարկ**

Հետաձգված հարկերը ճանաչվում են ժամանակավոր տարբերությունների գծով, որոնք առաջանում են ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային գումարների և հարկման բազաների միջև: Հետաձգված հարկային պարտավորությունները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկային ակտիվները ընդհանուր առմամբ ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների գծով միայն այն չափով որքանով հավանական է, որ ապագայում ամրա կլինի հարկման ենթակա շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունները: Նմանատիպ հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն ճանաչվում այն ժամանակավոր տարբերությունների համար, որոնք առաջանում են ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչման պահին (բացառությամբ գործարար միավորումների) այնպիսի գործարքների արդյունքում, որոնք ազդեցություն չունեն ինչպես հաշվապահական, այնպես էլ հարկվող շահույթի վրա:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում այն չափով, որով այլևս հավանական չէ, որ կստացվի բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային պարտավորությունները և ակտիվները չափվում են հարկերի այն դրույթների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույթները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:

Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք կառաջանան՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջում ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

### **Տարվա ընթացիկ և հետաձգված հարկեր**

Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք վերաբերում են տարրերի, որոնք ճանաչվել են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում: Նման դեպքում ընթացիկ և հետաձգված հարկերը նույնպես ճանաչվում են համապատասխանաբար այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

### **4.10 Պահուստներ**

Պահուստները ճանաչվում են, երբ Ընկերությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական), որպես անցյալ դեպքերի արդյունք և հավանական է, որ Ընկերությունից կպահանջվի կատարել պարտականությունը և այդ պարտականության գումարը արժանահավատորեն կարող է չափվել:

Պահուստում ճանաչված գումարն իրենից ներկայացնում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ լավագույն գնահատականը, որը կպահանջվի ներկա պարտականությունը մարելու համար՝ հաշվի առնելով հարակից ռիսկերը և անորոշությունները: Եթե պահուստը չափվում է՝ օգտագործելով ներկա պարտականության մարման համար գնահատված դրամական հոսքերը, ապա դրա հաշվեկշռային արժեքն իրենից ներկայացնում է այդ դրամական հոսքերի ներկա արժեքը (այն դեպքերում, եթե ժամանակի մեջ դրամի ազդեցությունն էական է):

Եթե ակնկալվում է, որ որևէ այլ կողմ ամբողջությամբ կամ մասամբ փոխհատուցելու է պահուստը մարելու համար պահանջվող ծախսումները, ապա փոխհատուցումը պետք է դիտվի որպես առանձին ակտիվ, երբ ըստ էության որոշակի է, որ փոխհատուցումը կստացվի և փոխհատուցման գումարը կարող է արժանահավատորեն չափվել:

## **5. Գնահատումների և դատողությունների օգտագործում**

Ֆինանսական հաշվետվությունները ՖՐՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների ակնկալիքների վրա, որոնք կարող են տեղի ունենալ տվյալ հանգամանքներում: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Ղեկավարությունը նաև գնահատումներից բացի, որոշակի դատողություններ է կատարել հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ընթացքում:

Դատողությունները և գնահատումները, որոնք առավել էական ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում արտացոլված գումարների և գնահատումների վրա, և որոնք կարող են զգալի ճշգրտումներ առաջ բերել ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում առաջիկա ֆինանսական տարվա ընթացքում, վերաբերում են իրական արժեքի գործիքներին: Իրական արժեքի լավագույն վկայություն է հանդիսանում դրա գինը ակտիվ շուկայում: Շուկայում գնի բացակայության դեպքում Ընկերությունն օգտագործում է այլ գնահատման տեխնիկաներ, մասնավորապես՝ թե՛ արտաքին և թե՛ ներքին շուկաներում համանման գործիքների հետ համեմատության մեթոդը: Իրական արժեքի չափումները ներկայացված են ծան. 20-ում:

## 6. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցները և դրանց համարժեքները՝ 101,858 հազար և 386,978 հազար ՀՀ դրամ գումարով՝ համապատասխանաբար 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, պահվում են Հայաստանի Հանրապետության բանկերում: Հաշվետու ամսաթվի դրությամբ պահվող միջոցների մնացորդների 94%-ը պահվում է մեկ տեղական բանկում (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 98%).

## 7. Պահանջներ բանկերի նկատմամբ

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բանկերի նկատմամբ պահանջներն իրենցից ներկայացնում են ավանդներ՝ 140,423 հազար ՀՀ դրամ գումարով, որոնք պահվում են մեկ տեղական բանկում (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ զրո): Ավանդների ժամկետայնությունը մեկ տարի է, տարեկան տոկոսադրույքը՝ 17.25%: Տարեվերջի դրությամբ մնացորդը ներառում է հաշվեգրված տոկոսը՝ 5,423 հազար ՀՀ դրամ գումարով:

## 8. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
«Ցե-Կվադրատ» խմբի ընկերությունների կողմից կառավարվող ֆոնդերում պահվող փայեր		
Գերմանիայում գտնվող ֆոնդերում փայեր	66,200	-
Ավստրիայում գտնվող ֆոնդերում փայեր	65,913	-
Փայեր Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերում		
Ցե-Կվադրատ Ամպեգա պահպանողական կենսաթոշակային ֆոնդ - Պ	18,445	58,127
Ցե-Կվադրատ Ամպեգա հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ - Պ	33,239	31,630
Ցե-Կվադրատ Ամպեգա կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ - Պ	18,403	17,052
<b>Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ</b>	<b>202,200</b>	<b>106,809</b>

Տես նաև ծան. 19.

## 9. Հիմնական միջոցներ

	Գրասենյակային գույք	Համակարգչային սարքավորումներ	Ընդամենը
<b>Սկզբնական արժեք</b>			
<b>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-	-	-
Ավելացումներ	5,648	2,224	7,872
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>5,648</b>	<b>2,224</b>	<b>7,872</b>
Ավելացումներ	4,670	-	4,670
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>10,318</b>	<b>2,224</b>	<b>12,542</b>
<b>Կուտակված մաշվածություն</b>			
2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	-	-
Մաշվածության ծախս	877	425	1,302
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>877</b>	<b>425</b>	<b>1,302</b>
Մաշվածության ծախս	1,262	445	1,707
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2,139</b>	<b>870</b>	<b>3,009</b>
<b>Չուտ հաշվեկշռային արժեք</b>			
<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>8,179</b>	<b>1,354</b>	<b>9,533</b>
<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>4,771</b>	<b>1,799</b>	<b>6,570</b>
<b>2013թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-	-	-

## 10. Շահութահարկ

Ընկերությունը գնահատում և հաշվառում է իր ընթացիկ վճարվելիք շահութահարկը և իր ակտիվների և պարտավորությունների հարկային բազան համաձայն ՀՀ հարկային օրենսդրության, որը կարող է տարբերվել ՖՅՄՍ-ից:

Ընկերությունն ունի որոշակի մշտական հարկային տարբերություններ, որոնք առաջանում են շահութահարկի նպատակներով չնվազեցվող որոշակի ծախսերից և շահութահարկի նպատակներով չհարկվող որոշակի եկամուտներից:

Հետաձգված հարկերը արտացոլում են ֆինանսական հաշվետվությունների նպատակով ներկայացվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և հարկային նպատակով օգտագործվող գումարների միջև ժամանակային տարբերությունների գուտ հարկային արդյունքները: Ժամանակավոր տարբերությունները 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնականում պայմանավորված են եկամուտների և ծախսերի ճանաչման մեթոդներով/ժամկետներով, ինչպես նաև որոշակի ակտիվների գծով հարկային գրանցամատյաններում օգտագործվող բազաների տարբերություններով:

Ստորև բերված հաշվարկներում օգտագործվում է ներկայիս հարկի դրույթաչափը՝ 20%, որը ՀՀ-ում վճարվում է ձեռնարկությունների կողմից՝ վերջիններիս հարկվող շահույթից (ինչպես սահմանված է) ՀՀ հարկային օրենսդրության համապատասխան:

	2015թ.	2014թ.
Շահույթում կամ վնասում ճանաչված ընթացիկ շահութահարկ	-	-
Շահույթում կամ վնասում ճանաչված՝ ժամանակավոր տարբերությունների առաջացմանը վերաբերող հետաձգված հարկային օգուտ	191	1,443
<b>Շահութահարկի գծով օգուտ</b>	<b>191</b>	<b>1,443</b>
Շահութահարկի գծով օգուտի համեմատագրումը՝		
Վնաս նախքան շահութահարկով հարկումը	(41,434)	(128,484)
Շահութահարկ՝ օրենքով սահմանված դրույթաչափով (20%)	(8,287)	(25,697)
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվներ	9,861	21,555
Չհարկվող եկամուտ	(2,715)	(1,045)
Չնվազեցվող ծախսեր	950	3,744
<b>Շահութահարկի գծով օգուտ՝ արդյունավետ դրույթաչափով՝ 0.46% (2014թ.՝ 1.1%)</b>	<b>(191)</b>	<b>(1,443)</b>

Ժամանակավոր տարբերություններին վերաբերող հետաձգված հարկի հաշվարկը հետևյալն է.

Հետաձգված հարկային ակտիվներ, այդ թվում՝	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մասնագիտական ծառայությունների գծով պարտավորություններ	500	500
Հիմնական միջոցներ	271	131
Աշխատակիցներին վճարվելիք հատուցումներ	1,423	1,372
<b>Հետաձգված հարկային ակտիվներ</b>	<b>2,194</b>	<b>2,003</b>

Հետաձգված հարկային ակտիվներում փոփոխությունները 2015թ. դեկտեմբերի 31-ին և 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ համապատասխանաբար 191 հազար և 1,443 հազար ՀՀ դրամ գումարի չափով, ճանաչվել են շահույթում կամ վնասում: Ընկերությունը չի ճանաչել հետաձգված հարկային ակտիվ 34,348 հազար ՀՀ դրամի չափով (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 24,487 հազար ՀՀ դրամի չափով)՝ հետագա ժամանակաշրջաններ տեղափոխված կուտակված հարկային վնասների գծով: Հարկային վնասները սպառվում են դրանց առաջացումից 5 տարի անց:

## 11. Այլ ակտիվներ

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Այլ ֆինանսական ակտիվներ</b>		
Ստացման ենթակա կառավարման պարզևավճար	13,325	3,938
<b>Այլ ոչ ֆինանսական կառավարման ակտիվներ</b>		
Հետաձգված ծախսեր	819	638
Կանխավճարներ ապրանքների և ծառայությունների դիմաց	3,599	1,473
<b>Ընդամենը այլ ակտիվներ</b>	<b>17,743</b>	<b>6,049</b>

## 12. Կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը 650,000 հազար ՀՀ դրամ է, որը կազմված է 650,000 բաժնեմասից, որոնցից յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1,000 դրամ: Ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է Ընկերության մասնակիցների կողմից:

Ընկերության մասնակիցներն են հանդիսանում «Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ ԱԳ» Ընկերությունը, որը գրանցված է Շոտենֆելդգասսե 20, 1070 Վիեննա, Ավստրիա հասցեով, գրանցման համար FN 55148a և «Տալանքս Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ-ն, որը գրանցված է Շարլ-դե-գոլլ փլաթց 1, Գերմանիա 50679 Բյոլն հասցեով, գրանցման համար HRB 61047:

Կանոնադրական կապիտալում յուրաքանչյուր մասնակցի բաժնեմասը հետևյալն է.

Մասնակից	Մասնակցության չափը	
«Ցե-Կվադրատ Ինվեսթմենթ ԱԳ»		
Ընկերություն	486,850	74.9%
«Տալանքս Ասեթ Մենեջմենթ» ՍՊԸ	163,150	25.1%
<b>Ընդամենը կանոնադրական կապիտալ</b>	<b>650,000</b>	<b>100%</b>

Ամբողջությամբ վճարված հասարակ բաժնետոմսերն ունեն մեկ ձայն մեկ բաժնետոմսի դիմաց և շահաբաժիններ ստանալու իրավունք:

Ընկերության մասնակիցների միջև բաշխման ենթակա պահուստը սահմանափակվում է կուտակված չբաշխված շահույթի գումարով, ինչպես ներկայացված է ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն պատրաստված հաշվետվություններում: Չբաշխվող պահուստները ներկայացված են հիմնական պահուստային հիմնադրամով, որը ձևավորված է տեղական օրենսդրության համաձայն՝ կապված ընդհանուր ռիսկերի, այդ թվում ապագա վնասների և չնախատեսված այլ ռիսկերի կամ պայմանական պարտավորությունների գծով: Պահուստը ձևավորվել է համաձայն Ընկերության կանոնադրության, որով նախատեսված է կանոնադրական կապիտալի 5%-ի չափով պահուստի ձևավորում նշված նպատակներով: 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կուտակված վնասը կազմել է 197,035 հազար ՀՀ դրամ (2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 155,792 հազար ՀՀ դրամ):



### 13. Կրեդիտորական պարտք և հաշվեգրված ծախսեր

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
<b>Այլ ֆինանսական պարտավորություններ</b>		
Մասնագիտական ծառայությունների գծով պարտավորություններ	9,333	3,176
Պարտավորություններ պահառուական վճարների գծով	3,628	1,070
Պարտավորություններ աշխատավարձի և հարակից ծախսերի գծով	-	2,305
Այլ պարտավորություններ	985	1,251
	<b>13,946</b>	<b>7,802</b>
<b>Այլ ոչ ֆինանսական պարտավորություններ</b>		
Չօգտագործված արձակուրդային պահուստ	6,617	6,858
Վճարման եկթակա ԱԱՀ	1,363	740
Այլ	-	50
<b>Ընդամենը պարտավորություններ և հաշվեգրված ծախսեր</b>	<b>21,926</b>	<b>15,450</b>

### 14. Կառավարման պարզևավճարներից եկամուտ

Ընկերությունը ստանում է կառավարման պարզևավճար իր կողմից կառավարվող ֆոնդերից: Կառավարման պարզևավճարը հաշվարկվում է օրական կտրվածքով՝ հաշվարկված տարեկան տոկոսադրույքով, ֆոնդերի գույն ակտիվների մնացորդի նկատմամբ: Կառավարման պարզևավճարի դրույքաչափերը սահմանված են համապատասխան ֆոնդերի կանոններում:

	2015թ.	2014թ.
<b>Կառավարվող ֆոնդեր</b>		
Ցե-Կվադրատ Ամպեգա պահպանողական կենսաթոշակային ֆոնդ - Պ	106,759	19,586
Ցե-Կվադրատ Ամպեգա հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ - Պ	2,082	756
Ցե-Կվադրատ Ամպեգա կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ- Պ	968	350
<b>Ընդամենը կառավարման պարզևավճարներից եկամուտ</b>	<b>109,809</b>	<b>20,692</b>

### 15. Տոկոսային եկամուտ

Տարվա համար տոկոսային եկամուտը ներկայացնում է բանկում տեղաբաշխված ավանդների և դրամական միջոցների և դրանց համարժեքների գծով հաշվեգրված տոկոսները: Տարվա ընթացքում արդյունավետ տոկոսադրույքը կազմել է 12.04% ՀՀ ֆինանսական կազմակերպություններում պահվող միջոցների նկատմամբ (2014թ.՝ 4.5%):

### 16. Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից գույն օգուտ

	2015թ.	2014թ.
Ֆոնդերում պահվող փայերի վաճառքից իրացված օգուտ	7,603	-
Ֆոնդերում պահվող փայերի իրական արժեքի փոփոխությունների գծով չիրացված գույն օգուտ	3,578	1,359
<b>Ընդամենը շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից գույն օգուտ</b>	<b>11,181</b>	<b>1,359</b>

### 17. Կոմիսիոն ծախսեր

	2015թ.	2014թ.
Պահառուական վճարներ	29,887	5,621
Կոմիսիոն վճարներ միջազգային բանկերին	3,757	676
Կոմիսիոն վճարներ տեղական բանկերին և արժեթղթերի բորսային	923	554
<b>Ընդամենը կոմիսիոն ծախսեր</b>	<b>34,567</b>	<b>6,851</b>

## 18. Վարչական և այլ ծախսեր

	2015թ.	2014թ.
Աշխատավարձ	78,034	90,663
Մասնագիտական ծառայություններ	37,806	30,303
Գործառնական վարձակալություն	16,402	17,274
Հարկեր, բացի շահութահարկից	11,011	7,830
Գործուղումներ և աշխատակիցների գծով այլ ծախսեր	6,729	9,682
Հաղորդակցության ծառայություններ	3,101	3,012
Մաշվածություն և ամորտիզացիա	2,016	1,598
Այլ ծախսեր	4,281	5,808
<b>Ընդամենը վարչական և այլ ծախսեր</b>	<b>159,380</b>	<b>166,170</b>

## 19. Պայմանագրային և պայմանական պարտավորություններ

### Հարկային ռիսկեր

Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրական և կանոնակարգային դաշտը ենթակա է հաճախակի փոփոխությունների: Օրենսդրության՝ Ղեկավարության մեկնաբանումը, որը վերջինս կիրառում է Ընկերության գործունեության նկատմամբ, կարող է վիճարկվել համապատասխան մարմինների կողմից: Հարկային մարմինները որպես կանոն առավել հաստատուն դիրք են զբաղեցնում օրենսդրության իրենց մեկնաբանության մեջ, և այն գործարքները, որոնք նախկինում վիճարկված չեն եղել, կարող են վիճարկվել: Հարկային մարմինների կողմից իրականացվող հարկային սուուզման ժամանակահատվածը հարկային սուուզմանը նախորդող երեք օրացուցային տարին է: Որոշակի հանգամանքներում սուուզումները կարող են վերաբերել ավելի երկար ժամանակահատվածների: Ղեկավարությունը համոզված է, որ բավարար կերպով է կատարում իր հարկային պարտավորությունները՝ հիմք ընդունելով հարկային օրենսդրության մեկնաբանությունները: Այնուամենայնիվ, համապատասխան մարմինները կարող են տարաբնույթ մեկնաբանություններ ունենալ և ֆինանսական հաշվետվությունների վրա ազդեցությունը կարող է լինել էական:

### Իրավական խնդիրներ և ռիսկեր

Իր բնականոն գործունեության ընթացքում Ընկերությունը ենթակա է դատական հայցերի և պահանջների, ինչպես նաև իր գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտի անբարենպաստ փոփոխությունների: Ղեկավարության համոզմամբ, հնարավոր վերջնական պարտավորությունները, որոնք ծագում են նման հայցերի և պահանջների արդյունքում, էական բացասական ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական դրության կամ հետագա գործունեության արդյունքների վրա, և համապատասխանաբար ոչ մի հաշվեգրում այդ ուղղությամբ չի կատարվել ֆինանսական հաշվետվություններում:

### Վարձակալական պարտավորություններ

Գործառնական վարձակալությունը վերաբերում է գրասենյակային տարածքի վարձակալությանը երեք տարի վարձակալական ժամկետով: Ընկերությունը հնարավորություն չունի ձեռք բերելու վարձակալված ակտիվը վարձակալական ժամկետի ավարտից հետո: Անչեղարկելի գործառնական վարձակալության գծով ապագա նվազագույն պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Մինչև 1 տարի	17,682	17,682
1-5 տարի	2,210	18,419
<b>Ընդամենը գործառնական վարձակալության գծով պարտավորություններ</b>	<b>19,892</b>	<b>36,101</b>

## Կառավարվող ֆոնդերում համատեղ ներդրման գծով պարտավորություններ

Ընկերությունն ըստ կանոնակարգային պահանջների պարտավոր է 1% համատեղ ներդրում ունենալ իր կողմից կառավարվող կենսաթոշակային ֆոնդերում: Այս և այլ օրենսդրական և նորմատիվ պահանջների իրականացումը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

## 20. Ֆինանսական գործիքների իրական արժեքը

Այս ծանոթագրությունը տրամադրում է տեղեկատվություն այն մասին, թե ինչպես է Ընկերությունը որոշում տարբեր ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը:

### Ընկերության՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը

Ընկերության որոշ ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ չափվում են իրական արժեքով յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Ստորև բերված աղյուսակում ներկայացված են Ընկերության ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի որոշման սկզբունքները (մասնավորապես՝ գնահատման տեխնիկան (ները) և օգտագործված ելակետային տվյալները):

Ֆինանսական ակտիվներ	Իրական արժեքը	Իրական արժեքի հիերարխիա	Գնահատման տեխնիկա(ներ) և հիմնական ելակետային տվյալ(ներ)	Եական ոչ դիտարկելի ելակետային տվյալ(ներ)	Ոչ դիտարկելի ելակետային տվյալների հարաբերակցությունը իրական արժեքին
	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ			
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ					
Փայեր ֆոնդերում	132,113	-	Մակարդակ 1	Գնանշումներ ակտիվ շուկայում	Կ/Ջ
Փայեր ֆոնդերում	70,087	106,809	Մակարդակ 2	Համապատասխան ֆոնդերի գուտ ակտիվների վերջին հրապարակված արժեքը՝ հաշվետու ամսաթվի դրությամբ	Կ/Ջ
	<b>202,200</b>	<b>106,809</b>			

Դեկավարությունը հիմնվում է սեփական դատողությունների վրա ֆինանսական գործիքները դասակարգելիս՝ օգտագործելով իրական արժեքի հիերարխիան: Գնահատման ելակետային տվյալների նշանակությունը գնահատվում է իրական արժեքի ամբողջական չափման համեմատությամբ:

Հաշվետու ժամանակահատվածում տեղի չեն ունեցել փոփոխություններ մակարդակ 1-ից դեպի մակարդակ 2 կամ հակառակը:

## **Ընկերության՝ շարունակական հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքը (որոնց գծով սակայն անհրաժեշտ են իրական արժեքի բացահայտումներ)**

Հաշվի առնելով շարունակական հիմունքով իրական արժեքով չչափվող ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կարճաժամկետ բնույթը, ղեկավարությունը կարծում է, որ դրանց հաշվեկշռային արժեքները մոտ են դրանց իրական արժեքին: Եթե կիրառելի է, ապա տվյալ ակտիվի կամ պարտավորության վերաբերյալ ծանոթագրություններում բացահայտվում է լրացուցիչ տեղեկատվություն իրական արժեքի որոշման հիմքում ընկած ենթադրությունների վերաբերյալ, սակայն, հաշվի առնելով սուբյեկտիվ դատողությունը և անորոշությունները, իրական արժեքը չպետք է համարվի անմիջապես իրացվելի՝ ակտիվների վաճառքի կամ պարտավորությունների մարման պահին:

### **21. Կապիտալի ռիսկի կառավարում**

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ գործունեության շարունակականությունն ապահովելու և շահառուների եկամուտները առավելագույնի հասցնելու նպատակով: Ընկերության կապիտալի կառուցվածքն իրենից ներկայացնում է կանոնադրական կապիտալը, որը բաղկացած է թողարկված կապիտալից և չբաշխված շահույթը, որոնք բացահայտված են սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվությունում: Ընկերության կապիտալի ռիսկի կառավարման քաղաքականությունն ընդհանուր առմամբ անփոփոխ է մնացել 2015թ. ընթացքում:

Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ օգտագործելով ի թիվս այլ միջոցների, ՅՅ ԿԲ կողմից Ընկերության վերահսկողության նպատակով սահմանված նորմատիվները: Համաձայն ՅՅ ԿԲ Կանոնակարգ 10/02-ի, ընդհանուր կանոնակարգային կապիտալի չափը չպետք է լինի 500,000 հազար ՅՅ դրամից ցածր՝ հաշվարկված միջին օրական կտրվածքով օրացուցային ամսվա ընթացքում, համաձայն Կանոնակարգ 10/02-ի:

### **22. Ֆինանսական ռիսկերի կառավարում**

Ընկերության ռիսկի կառավարման ընդհանուր ծրագիրը հաշվի է առնում Հայաստանի ֆինանսական շուկաների անորոշությունը և անարդյունավետությունը և ձգտում է նվազեցնել Ընկերության ֆինանսական արդյունքների վրա բացասական ազդեցությունը: Ընկերության ղեկավարությունը վերահսկում է այդ ռիսկերի կառավարումը. ֆինանսական ռիսկային գործունեությունը կառավարվում է համապատասխան քաղաքականություններով և կանոնակարգերով՝ ֆինանսական ռիսկերի բացահայտման, չափման և Ընկերության քաղաքականության համաձայն կառավարման համար:

Ընկերությանը բնորոշ են շուկայական, վարկային և իրացվելիության ռիսկերը: Այս ռիսկերից յուրաքանչյուրի կառավարման քաղաքականությունները ամփոփված են ստորև.

#### **Վարկային ռիսկ**

Վարկային ռիսկը կորստի ռիսկն է, որ կարող է առաջանալ փոխառուի, թողարկողի կամ պայմանագրային կողմի՝ պայմանավորվածության համաձայն ֆինանսական պարտավորությունները կատարելու կարողության վատթարացման արդյունքում: Ընկերությունը կրում է վարկային ռիսկ առաջին հերթին ներդրումային գործունեության և բանկերում մնացորդների գծով: Ներկայումս ընկերությունը ներդրումներ ունի իր կողմից կառավարվող ֆոնդերի փայերում և այդ ներդրումների առանձին մոնիտորինգ չի իրականացվում:

Ընկերությունը պատասխանատու է վարկային ռիսկի վերահսկողության համար և պատասխանատու է Ընկերության վարկային ռիսկի կառավարման համար, այդ թվում՝ պարտքային քաղաքականության ձևակերպում, գրավի պահանջների բավարարում, վարկերի գնահատում, վարկային ռիսկի ուսումնասիրություն և գնահատում, պայմանագրային կողմերի գծով, ինչպես նաև ըստ թողարկողի, վարկային ռեյտինգի միջակայքերի, շուկայի իրացվելիության և երկրի գծով կուտակումների սահմանափակում: Դեկավարությունը կանոնավորապես գնահատում է ակտիվների որակը:

2015թ. և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակտիվների գծով վարկային ռիսկի ենթարկվածությունը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	Երկիր	Վարկանիշ
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	101,858	386,978	Հայաստան	Չվարկանշված
Պահանջներ բանկերի նկատմամբ	140,423	-	Հայաստան	Չվարկանշված
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	70,087	106,809	Հայաստան	Չվարկանշված
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	66,200	-	Գերմանիա	4 աստղ, «Morningstar»
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	65,913	-	Ավստրիա	3 աստղ, «Morningstar»
Այլ ակտիվներ	13,325	3,938	Հայաստան	Չվարկանշված
	<b>457,806</b>	<b>497,725</b>		

Հաշվետու ամսաթվի դրությամբ որևէ ֆինանսական ակտիվ ժամկետանց կամ արժեզրկված չի եղել:

### Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Ընկերությունը դժվարություն կունենա իր այն ֆինանսական պարտավորությունները կատարելիս, որոնց մարումը նախատեսվում է կատարել կանխիկով կամ այլ ֆինանսական ակտիվներով: Ընկերությունը իրացվելիության լրացուցիչ մակարդակ է ապահովում՝ բանկերում պահվող ընթացիկ միջոցներով, դրանով իսկ ապահովելով օրական ֆինանսավորման կարիքները:

Կանխիկի դիրքի և դրամական հոսքերի վրա ազդող գործոնները ներառում են Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերի գործունեությունը, որոնցից Ընկերությունը ստանում է կառավարման պարզևավճարներ և ընթացիկ բանկային հաշիվների մնացորդները և պահանջները բանկերի նկատմամբ, որոնց գծով Ընկերությունը ստանում է տոկոսային եկամուտ: Այնուամենայնիվ, ներկայումս և ըստ գնահատումների՝ առաջիկա 2-3 տարիների ընթացքում Ընկերության իրացվելիության հիմնական աղբյուրն իր կանոնադրական կապիտալն է:

Ընկերության քաղաքականությունը իրացվելիության կառավարման առումով կայանում է նրանում, որպեսզի Ընկերությունը ունենա բավարար իրացվելիություն պատրավորությունների կատարման համար, թե ընթացիկ, և թե սթրեսային իրավիճակներում:

Ստորև ներկայացված աղյուսակում 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ներկայացվում են զեղչված հիմունքով և հիմնված են դրանց պայմանագրով նախատեսված դրամական հոսքերի վրա: Ըստ ղեկավարության գնահատումների, որոշակի ֆինանսական ակտիվների գծով ակնկալվող դրամական հոսքերը տարբերվելու են դրանց պայմանագրով նախատեսված պայմաններից, ելնելով նրանից, որ ղեկավարությունը կարող է իր հայեցողությամբ տնօրինել դրամական հոսքերը, կամ նախորդ փորձը ցույց է տալիս, որ դրամական հոսքերը կարող են տարբերվել պայմանագրով նախատեսված պայմաններից:

Ղեկավարությունը տնօրինում է արժեթղթերի պորտֆել, որն իրացվելի է և կարող է օգտագործվել ֆինանսական պարտավորությունների արտահոսքերն ապահովելու համար: Ըստ ղեկավարության գնահատականի ֆինանսական պարտավորությունների չզեղչված հոսքերը էապես չեն տարբերվում ստորև ներկայացված աղյուսակում արտացոլված տվյալներից և լրացուցիչ չեն ներկայացվում:

**2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Յինչև 1 Մինչև 1 ամիս	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Առանց ժամկե- տայնության
	Հաշվեկշռա- յին արժեք	ժամկետով			
<b>Ֆինանսական ակտիվներ</b>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	101,858	101,858	-	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	140,423	-	-	140,423	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	202,200	-	-	-	202,200
Այլ ֆինանսական ակտիվներ	13,325	13,325	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>457,806</b>	<b>115,183</b>	<b>-</b>	<b>140,423</b>	<b>202,200</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>					
Այլ ֆինանսական պարտավորություններ	13,946	13,946	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>13,946</b>	<b>13,946</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Չուտ դիրք</b>	<b>443,860</b>	<b>101,237</b>	<b>-</b>	<b>140,423</b>	<b>202,200</b>

**2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ**

	Յինչև 1 Մինչև 1 ամիս	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Առանց ժամկե- տայնության
	Հաշվեկշռա- յին արժեք	ժամկետով			
<b>Ֆինանսական ակտիվներ</b>					
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	386,978	386,978	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	106,809	-	-	-	106,809
Այլ ֆինանսական ակտիվներ	3,938	3,938	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>497,725</b>	<b>390,916</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>106,809</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>					
Այլ ֆինանսական պարտավորություններ	7,802	7,802	-	-	-
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>7,802</b>	<b>7,802</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>
<b>Չուտ դիրք</b>	<b>489,923</b>	<b>383,114</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>106,809</b>

**Շուկայական ռիսկ**

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայում գործող գների փոփոխությունները, ինչպիսիք են տոկոսադրույքի ռիսկը, արժեթղթերի արժեքի, արտարժույթի փոխարժեքի և վարկային սպրեդերի փոփոխությունները կազդեն ԸՆԿերության եկամուտների կամ ֆինանսական գործիքների իրական արժեքի վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի

սահմաններում՝ միաժամանակ ապահովելով եկամտաբերության օպտիմալացումը: Ընկերությունն իրականացնում է իր ներդրումային գույքի կառավարումը ըստ գործիքների և օրական կտրվածքով:

### Տոկոսադրույքի ռիսկ

Ընկերությանը բնորոշ է ֆինանսական գործիքների պորտֆելի իրական արժեքի կամ եկամտի/ապագա դրամական հոսքերի տատանման ռիսկը շուկայական տոկոսադրույքների տատանման արդյունքում: Ընկերության տոկոսակիր ֆինանսական գործիքների գծով Ընկերության քաղաքականությունն է՝ գործարքներ կատարել այնպիսի մարման ժամկետ ունեցող ֆինանսական գործիքներով, որոնք լավագույնս համապատասխանում են Ընկերության փայտերերի տարիքային խմբին և փայերի մարման ակնկալվող ժամկետներին: Այնուամենայնիվ, տոկոսադրույքի ռիսկի ազդեցությունը կարող է բարձր լինել՝ շուկայում գերիշխող տոկոսադրույքների տատանումների արդյունքում:

Տոկոսային եկամտի վրա կարող են ազդեցություն ունենալ այդ ակտիվների ծավալի և համադրության, ինչպես նաև տոկոսադրույքների և պորտֆելի կառավարման ռազմավարության տատանումները: Երբ տեղի է ունենում տոկոսադրույքների անկում, Կառավարիչը կարող է փորձել մեղմել այդ անկման բացասական ազդեցությունը՝ ավելացնելով ներդրումային պորտֆելում ակտիվների մարման ժամկետները՝ ակտիվի եկամտաբերությունը անփոփոխ թողնելու նպատակով: 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ տոկոսակիր ֆինանսական գործիքներն իրենցից ներկայացրել են ֆիքսված տոկոսադրույքով գործիքներ: Ստորև ներկայացված է տոկոսադրույքի միջակայքի դիրքը ֆինանսական գործիքների գծով՝ 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ.

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ						Ոչ տոկոսակիր
	Հաշվե- կշռային արժեք	Ֆիքսված տոկոսադրույքով					
		1 ամսից պակաս	1-ից 6 ամիս	6-ից 12 ամիս	1-ից 5 տարի	Ավելի քան 5 տարի	
<b>Ֆինանսական ակտիվներ</b>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	101,858	95,720	-	-	-	-	6,138
Պահանջներ բանկերի նկատմամբ	140,423	-	-	140,423	-	-	-
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	202,200	-	-	-	-	-	202,200
Այլ ֆինանսական ակտիվներ	13,325	-	-	-	-	-	13,325
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>457,806</b>	<b>95,720</b>	-	<b>140,423</b>	-	-	<b>221,663</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>							
Այլ ֆինանսական պարտավորություններ	13,946	-	-	-	-	-	13,946
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>13,946</b>	-	-	-	-	-	<b>13,946</b>
<b>Չուտ դիրք</b>	<b>443,860</b>	<b>95,720</b>	-	<b>140,423</b>	-	-	<b>207,717</b>

<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>							
	<b>Ֆիքսված տոկոսադրույթով</b>						
	<b>Հաշվե- կշռային արժեք</b>	<b>1 ամսից պակաս</b>	<b>1-ից 6 ամիս</b>	<b>6-ից 12 ամիս</b>	<b>1-ից 5 տարի</b>	<b>Ավելի քան Ոչ 5 տարի</b>	<b>Տոկոսա- կիր</b>
<b>Ֆինանսական ակտիվներ</b>							
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	386,978	379,283	-	-	-	-	7,695
Այլ ֆինանսական ակտիվներ	106,809	-	-	-	-	-	106,809
Այլ ֆինանսական ակտիվներ	3,938	-	-	-	-	-	3,938
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>497,725</b>	<b>379,283</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>118,442</b>
<b>Ֆինանսական պարտավորություններ</b>							
Այլ ֆինանսական պարտավորություններ	7,802	-	-	-	-	-	7,802
<b>Ընդամենը ֆինանսական պարտավորություններ</b>	<b>7,802</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>7,802</b>
<b>Չուտ դիրք</b>	<b>489,923</b>	<b>379,283</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>110,640</b>

Քանի որ Ընկերության ֆինանսական գործիքների գծով դրամական միջոցների հոսքերից որևէ մեկը 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կապակցված չէ լողացող տոկոսադրույթի, Ընկերությունը չի պատրաստում և ներկայացնում տոկոսադրույթի ռիսկի զգայունության վերլուծություն, քանի որ այս առումով առկա չէ ազդեցություն շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են միջին տոկոսադրույթները տոկոսակիր գործիքների գծով՝ հիմք ընդունելով Ընկերության վերանայած հաշվետվությունները: Այս տոկոսադրույթներն իրենցից ներկայացնում են այդ ակտիվների ժամկետայնությունից ելնելով դրանց եկամտաբերության մոտավոր պատկերը.

	<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>
<b>Տարեկան % արտահայտությամբ</b>	<b>ՀՀ դրամ</b>	<b>ՀՀ դրամ</b>
Տոկոսակիր ակտիվներ	12.04%	4.50%
Տոկոսակիր պարտավորություններ	-	-

### Արժուրային ռիսկ

Արժուրային ռիսկը արտարժույթի փոխարժեքների փոփոխության հետևանքով ֆինանսական գործիքի ապագա դրամական հոսքերի իրական արժեքների տատանումների ռիսկն է: Ընկերության արտարժույթի փոխարժեքի փոփոխության ռիսկին ենթարկվածությունը հիմնականում Ընկերության ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի մասով է:



Ընկերության ենթարկվածությունը արտաժողովի փոխարժեքների փոփոխության ռիսկերին ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	ՀՀ դրամ	Եվրո	Ընդամենը
<b>Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	98,084	3,774	101,858
Պահանջներ բանկերի նկատմամբ	140,423	-	140,423
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	70,087	132,113	202,200
Այլ ֆինանսական ակտիվներ	13,325	-	13,325
<b>Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ</b>	<b>321,919</b>	<b>135,887</b>	<b>457,806</b>
<b>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</b>			
Այլ ֆինանսական պարտավորություններ	7,613	6,333	13,946
<b>Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</b>	<b>7,613</b>	<b>6,333</b>	<b>13,946</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>314,306</b>	<b>129,554</b>	<b>443,860</b>

	2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		
	ՀՀ դրամ	Եվրո	Ընդամենը
<b>Ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ</b>			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	386,638	340	386,978
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ	106,809	-	106,809
Այլ ֆինանսական ակտիվներ	3,938	-	3,938
<b>Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ</b>	<b>497,385</b>	<b>340</b>	<b>497,725</b>
<b>Ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</b>			
Այլ ֆինանսական պարտավորություններ	6,895	907	7,802
<b>Ընդամենը ոչ ածանցյալ ֆինանսական պարտավորություններ</b>	<b>6,895</b>	<b>907</b>	<b>7,802</b>
<b>Զուտ դիրք</b>	<b>490,490</b>	<b>(567)</b>	<b>489,923</b>

Ստորև ներկայացված է համապատասխան արտաբերության փոխարժեքների ողջամտորեն հավանական փոփոխությունների հետևանքով 2015 և 2014թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ դրամով արտահայտված ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի փոփոխության դեպքում շահույթի կամ վնասի և սեփական կապիտալի զգայությունը, պայմանով որ մնացած փոփոխականները կմնան կայուն:

	2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
	Շահույթ կամ վնաս/սեփական կապիտալ Արժեզրկում	Շահույթ կամ վնաս/սեփական կապիտալ Արժեզրկում	Շահույթ կամ վնաս/սեփական կապիտալ Արժեզրկում	Շահույթ կամ վնաս/սեփական կապիտալ Արժեզրկում
Եվրոյի 20% փոփոխություն (2014թ.՝ 10.83%)	(14,031)	14,031	61	(61)

## Այլ գնային ռիսկեր

Ընկերությունը ենթարկվում է ֆոնդերում պահվող փայերի գծով գնային ռիսկերի: Փայերը պահվում են ֆոնդերում հիմնականում օրենսդրական, ռազմավարական և ներդրումային նպատակներով, այլ ոչ թե առևտրային նպատակներով: Ընկերությունը ակտիվորեն չի իրականացրել այս փայերի առք ու վաճառք:

Ստորև բերված զգայունության վերլուծությունը հիմնված է հաշվետու ժամանակաշրջանի վերջում

փայերի գնային ռիսկերի ենթարկվածության վրա:

Այն դեպքում, եթե մեկ փայի արժեքը 5%-ով ավելի բարձր/ցածր լիներ, ապա 2015թ. վնասը կնվազեր/կաճեր 10,110 հազար ՀՀ դրամով, շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվների իրական արժեքում տեղի ունեցած փոփոխությունների արդյունքում (2014թ.՝ նվազում/աճ 5,340 հազար ՀՀ դրամով):

### 23. Կապակցված կողմերի բացահայտումներ

Համաձայն ՀՀՄՍ 24 «Կապակցված կողմերի բացահայտում» ստանդարտի, կողմերը համարվում են կապակցված, եթե նրանցից մեկը կարող է վերահսկել մյուսին կամ նշանակալի ազդեցություն ունենալ մյուսի վրա՝ ֆինանսական և գործառնական որոշումներ կայացնելիս: Ներկայացվող հաշվետվությունների առումով Ընկերության կապակցված կողմերն են՝ նրա մայր ընկերությունը, գլխավոր բաժնետերերը, Ընկերության ղեկավարությունը, ինչպես նաև նրանց հետ կապակցված անձինք և նրանց կողմից վերահսկվող կազմակերպությունները:

Ընկերության անմիջական և վերջնական մայր ընկերությունները բացահայտված են Ծան. 1-ում և 12-ում: Ընկերության վերջնական վերահսկող կազմակերպությունն է C-QUADRAT Investment AG. ընկերությունը, որը հանդիսանում է C-QUADRAT Group-ի մայր ընկերությունը: C-QUADRAT Investment AG ընկերության բաժնետոմսերը ցուցակված են Ֆրանկֆուրտի արժեթղթերի բորսայում (Prime Standard) և Վիեննայի արժեթղթերի բորսայում (Standard Market Auction), որոնց չորս հիմնական բաժնետերերն են հանդիսանում Talanx Asset Management GmbH (25.10%), T.R. Privatstiftung (20.20%) և San Gabriel Privatstiftung (15.68%), ընդ որում վերջին երկու հիմնադրամները հանդիսանում են սինդիկացված պայմանագրի կողմեր: Laakman Holding ընկերությունը նույնպես ունի 18.41% բաժնեմասնակցություն «C-QUADRAT Investment AG» ընկերությունում:

<b>Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն</b>	<b>2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	<b>2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>
Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերում պահվող փայեր	70,087	106,809
«Ցե-Կվադրատ» խմբի ընկերությունների կողմից կառավարվող ֆոնդերում պահվող փայեր	132,113	-
Պարտավորություններ «Ցե-Կվադրատ» խմբի ընկերությունների նկատմամբ մասնագիտական ծառայությունների դիմաց	(3,550)	-

<b>Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն</b>	<b>2015թ.</b>	<b>2014թ.</b>
Կառավարման պարզավճարներից եկամուտ	109,809	20,692
Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական ակտիվներից զուտ օգուտ	11,181	1,359
Մասնագիտական ծառայությունների վճարներ «Ցե-Կվադրատ» խմբի ընկերություններին	(3,904)	-

Առանցքային ղեկավար անձնակազմի վարձատրությունը՝ բաղկացած կարճաժամկետ հատուցումներից, կազմել է 51,914 հազար ՀՀ դրամ (2014թ.՝ 57,480 հազար ՀՀ դրամ) և ներառվել է հաշվետու ժամանակաշրջանի վարչական և այլ ծախսերում: